 առ հայր՝ եթէ ոչ ինք. (Յ. 12. Թ. 6.)  
 Վսեմաստնս իմաստ-  
 նոց աշխարհիս այսորիկ, որք գերա-  
 ղանցին գիտութեամբ իւրեանց և  
 ինդրեն յինքեանս զայն, որ հարկա-  
 ւոր է վասն փրկութեան իւրեանց,  
 այս աի՛ (որպէս ասէ ինքն փրկիչն մեր)  
 ծածկեալ է. այլ տղայոց, ինչ, այնպի-  
 սեաց, որք համարին զանձինս իւրեանց  
 տղայս ՚ի գիտութիւնս ՚ի ճանաչմու-  
 նրս և ՚ի փորձանս, և որք ոչ պարծին  
 իմաստութեամբ իւրեանց, այլ ապա-  
 ւինին բողոքով սրտի՛ւ յաստուած և  
 ՚ի վարդապետութիւնս նորաս, (Մ. 1. Թ. 5.  
 յայտնեալ է այս ՚ի հօրէ ՚ի



ձեռնն Յիսուսի Վրի (Սաղմ. Ժմ. 25.) քանզի այդպիսի սիրտք և եթ կարեն ընդունիլ զմծային յայտնուի: Խնդրեցէք զհեղութիւն և զխոնարհութիւն զանձեցէք. զի աստուած տայ շնորհս խոնարհաց. ամբարտաւանից հակառակ կայ. (Սոբ. ք. 3: Ղուկ. ԺԶ. 15: Թ. Պետ. Է. 5: Կե'ն և զԳլուխ. ԺԸ.)

### ԳԼՈՒԽ Լ՛

Լուսնոց ճշմարտիս զշջման առաջի առաւան ծոյ, ոչ է հարելի անն ունել Բողոտելէ Դեղաց. Իսկ առանց ճշմանորոգ և արեղ շախման ապաշխարուելէ, ոնճարել է Լինել հասար յաւելարուն,

Իսկ եթէ դու կամիս հետեիլ Յի Վրի և ցանկաս գտանել զանտարակուսելի ապաւինուի յառաջնորդուի և ՚ի վարդապետութիւնս նորա առ Ժամանել յաւիտեանական երջանկուէ պարտիս դու յառաջ զմեղս քո մեղս համարիլ (Սաղմ. Ծ. 5.) պարտիս դու



խոնարհիլ առաջի աստուծոյ և մե-  
 զադրեւ զանձն քո, իբրև զարժանի  
 պատժոյ՝ յանցաւոր ընդդէմ փրկաւետ  
 պատուիրանաց նորա, քի, պարզապէս  
 խոստովանիլ առաջի նորա զմեղս քո,  
 ոչ ծածկելով, ոչ ներելով միում և  
 ոչ արդարացուցանելով զանձն քո ՚ի  
 միւսում: Յոյց զքեզ նմա այսպէս,  
 որպէս ետդ իսկ, և մի ցանկասցիս ե-  
 ղելիլ լաւ քան զոր ես ճշմարտապէս:  
 Օ, ի եթէ ասիցեմք, եթէ մեղս ինչ  
 մեք ոչ ունիմք՝ զանձինս խաբեմք.  
 և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ:  
 Ապա եթէ խոստովան լինիցեմք ըզ-  
 մեղս մեր. հաւատարիմ է նա և ար-  
 դար՝ առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր.  
 և սրբել զմեզ յամենայն անիրաւուէ  
 (Թ. 3. 9:) Առանց ճշմարիտ  
 խոստովանութեան մեղաց՝ անմարթ  
 է ստանալ զթողութիւն մեղաց, նաև  
 հաւատալ իսկ այնմ ՚ի սրտի մերում:  
 Քանզի նա ամենագէտն և ամենու-  
 ղէքն գիտէ զսիրտ մեր և զամենա-  
 ծածուկ խոտորումն նորին ՚ի ճշմար-  
 տութենէ: Առաջի նորա ոչ զօրեն



Ինչ պատճառանք այնորիկ զոր մարդ-  
 կային անձնասիրութիւն հնարէ և ա-  
 ուաջ բերէ: Ար ծածկէ զամբարշտու-  
 թիւնս իւր՝ ո՛չ յաջողեցի. իսկ որ  
 պատմէ և յանդիմանէ՝ սիրելի եղիցի:  
 (Ամհ. Իբ. 13: Կէ. 7: Աէէճ.  
 Թ. 6:) Օ՛ր ի եթէ զանձինս քննեաք՝  
 ապա ո՛չ դատապարտեաք (Թ. Արհ. Թ.  
 ԺԹ. 31:) Ընառակ որդին ինքն զան-  
 ձրն իւր դատեաց՝ խոստովանեալ ՚ի  
 բազում և ծանր մեղս իւր. վն այսր  
 պատճառի ընկալաւ նա զթողութիւն,  
 և հայրն արկ ՚ի մոռացո՛նս զամենայն  
 նախնի անօրէնութիւն նորա (Ամհ.  
 ԺԷ. 17. 24:): Ընդ հակառակն ՚ի  
 վարդապետութիւն և ՚ի նախազգու-  
 շութիւն մեր ընթեռնումք վասն  
 դաւթի, թէ նա յաղագս արարեալ  
 ՚ի հմանէ մեղաց, ընդ երկար կրեաց  
 զխէթ խղձի մտաց և ո՛չ կարաց գտա-  
 հել զհաստատ յոյս ՚ի գթութի, որում  
 փափագէրն այնչափ եռանդագին. և  
 պատճառ այսր, ըստ սեպհական նորին  
 խոստովանութեան (Ամհ. ԸԹ. 4.)  
 էր այն, զի նա կամեցաւ լռել առա-



ջի աստուծոյ զանօրէնութեան իւր-  
 մէ, ինչ, պատճառանօք ծածկել զայն  
 ոչ համարիլ զայն աստուգապէս մեղք  
 և ոչ զղջանալ վասն այնր: Այլ յոր-  
 ժամ նա խոստովան եղև առաջի աս-  
 տուծոյ զմեզս իւր, կամ որպէս յայ-  
 լում տեղեոջ (Առդ. ԼԷ. 19.) գրեալ  
 է, յորժամ յայտնեաց նմա զայնօսիկ,  
 յայժամ եթող նա նմա զամպարշտու-  
 թիւն սրտի նորա (Առդ. ԼԹ. 5. 4. և  
 Թ. 13.) Ասն այսորիկ  
 իսկ և նա գրեաց, հիմնեալ ՚ի սեպ-  
 հական փորձս արձին (Առդ. ԼԹ. 2.)  
 Թէ՛ երանի առն՝ որում ոչ համարի  
 Տէր զմեզս նորա. և ոչ գոյ նե՛նգուի  
 ՚ի բերան նորա: Աստ բանից սրբոյ  
 առաքելոյն պօղոսի պարտ է մեզ  
 տրամիլ վասն մեղաց մերոց յապաշ-  
 խարութիւն: Տրամութիւնս այս է  
 տրամութիւն ըստ աստուծոյ, այսինքն  
 է տրամութիւն, զոր աստուած նա-  
 խապէս կամեցաւ, որում ինքն իսկ ըս-  
 պասեաց, որ հաճոյ է նմա, և որ  
 զապաշխարութիւնն ՚ի փրկութիւն  
 առանց զղջանալոյ գործէ (Թ. Արհ.)

Է. 9. 10: Սաղ. 115. 19: Եսայ. 47.  
 2: Յակ. Է. 12. 13: Յակ. Գ.  
 8-10: Քաղցրութիւնն աստուծոյ  
 ածէ զմեզ յապաշխարութիւն, քի, ՚ի  
 լուսաւորութիւն սրտի մերոյ առ ՚ի  
 ճանաչել զմեզս մերս (Յակ. Է. 4)  
 Խակ զղջումն, որոյ ճշմարիտ նշանն  
 է ատելութի մեղաց և զզուումն յայն-  
 ցանէ, այնպիսի սերտ և անխղճի  
 կապօք է կապեալ ընդ հաւատոյ  
 յաւետարան, յորոյ վերայ հիմնեալ է  
 փրկութի մեր, զի առանց զղջման  
 անմարտ է բնաւին վայելել յաւե-  
 տարանական մտիտարանս: Խակ զղ-  
 ջումն հախադասի հաւատոյ յաւետա-  
 րան վասն այնր, զի առանց զղջման  
 (որով պարզապէս խոստովանիմք և  
 զղջանամք յարարեալ չարութիս այն-  
 պէս, որպէս և ՚ի [Ժողեալ բարիս])  
 ոչ է կարելի լինել ճշմարիտ հա-  
 ւատ: Քանզի որ հաւատայ ՚ի Յի-  
 սուս Քրիստոս, ՚ի ձեռն հորա ջա-  
 նայ գտանել զԺողութի մեղաց: Խակ  
 զիմրդ կարէ հա ճշմարտապէս գտա-  
 նել զԺողութիւն մեղաց, երբ հա

ոչ խոստովանի զնոսին, այլ ջանայ պատճառանօք անմեղ ցուցանել զանձըն, երբ ոչ զղջանայ յայնս և ոչ հրաժարի յայնցանէ, այլ հեղգանայ յիւր մեղահազակահունէ:

Սակայն չէ պարտ համարել զպաշխարութի դործ վայրկեհական և փութակատար. այլ ընդ հակառակն, որովհետև անդադար պնդին զհետմեր և դիւրաւ շուրջ զմեօք յածին մեղք (Սէր. Ժբ. 1.) արժան է զայն յիւրաքանչիւրում աւուր նորոգել և յառաջ տանել (բ. Աորն. 7. 16: Թ. Յովն. 7. 3: Աբե. 7. 23. 24): Աստուծոյ ճշմարտանյ ասացին կեանք հաւատացելոյ յերկրի պարտի լինիլ միշտ և անուադար յապաշխարութեան: Աստ յերկրի ոչ որ է հասել ՚ի փառաւոր կէտ վերին կոչմանն Աստուծոյ այնպէս, զի վերստին մի կարացի զրկիլ յայնմանէ (Փիլ. 7. 12—14.) և ոչ որ է ժամանեալ յայնպիսի կատարելութիւն, զի ոչ յիւրաքանչիւրում աւուր մեծաւ տրամութեամբ սրտի խոստովան լիցի, թէ առաւել

ևս պարտ է նմա սրբիւ Հոգւովն  
 Մտուծոյ և ամրանալ ՚ի հաւատոս  
 Քանզի, [Ժէ դարձեալք, և [Ժէ  
 ուղղեալք, յամ ժամանակի վար-  
 ժութեան և կրթութե իւրեց յայսմ  
 աշխարհի՝ դասին առ մեղաւորս. նք  
 նմանին հիւանդաց, որք առողջանան,  
 բայց որոց բժշկութիւն տակաւին չէ  
 կատարեալ (Պ Գ. Ե. 31. 32.) նք  
 նմանապէս, որպէս և այսօքիկ յետին-  
 քրս, են ՚ի վտանգի և յերկիւղի՝  
 անկանիւ վերստին յառաջին խօթու-  
 թիւնս, և պարտին փոխադարձ յոր-  
 դորեւ զիրեարս. Օգոյշ լին՛ ջիք ան-  
 ձանց, զի մի կորուսանիցէք՝ զոր  
 վաստակեցիքն. այլ զի առնուցուք բո-  
 վանդակ զվարձն. (Թ. 3. 8:)

Պ Ա Ո Ւ Վ Ս. Բ:

Որչա՞ աստուծու ճանաչե՞ս զանչի՞նս ճանաչ-  
 ժանո, տնէարս և արժանիս դաստաւոր-  
 աստուծան, այնչա՞ մե՞ կորուսանի՞ սա-  
 նի՞ս օգնուստան Քի՞ և նորին վար-  
 դաստուծան, զորո նո հաստատե՞ս

լոյ իւրոց պարգևէ: Յայնժամ Լե-  
նիճոյ մէջ ընդունուիցէ, սպանուի ՚ի նճանի  
զայսոսից պարգևոս:

Տրտմալի զգացողութեան անարժա-  
նութեան մերոյ՝ անչափութեան մեղաց  
մերոց, պակասութեան և յանցանաց մե-  
րոց առաջի անց, չէ պարտ, զի արգե-  
լումն եղիցի մեզ վասն խնդրեցոյ  
զապաստան և զփրկութեան ՚ի Քրիս-  
տոս: Յիմ ժամանակս Լինեցոյ ՆՐ  
յերկրի, և ոչ մի ոմն տառապեալ  
մարմնակա՛ն խօթութեամբ, որչափ ևս  
հիւանդութիւն Նորա Լինեցի հին,  
ծանր և անյոյս, ոչ եղև մերժեալ ՚ի  
Նմանէ կամ թողեալ առանց բժշ-  
կութեան: Ի վստահութեամբ աղա-  
չանք. Յիսուս ողորմեա՛ ինձ, վար-  
ձադրեցաւ յիւրաքանչիւր անգամ  
կատարեալ օգնութեամբ: Եւ պարէն  
եթէ դու ՚ի ծանր բեկման սրտիդ՝  
զգաս զտկարութի հոգւոյ քո, մի հա-  
մարիւր զքեզ ցափս վայր ստորանկէլ  
զի նա ոչ կարիցէ տալքեզ զապաստ  
Նա լաւ քան զքեզ գլտէ զհիւան-



դու[թիւն քո զօրու[թի հորա գերա-  
 շանց է զամենայն տկարու[թեամբ  
 քով. և հարստու[թիւն շնորհաց հորա  
 քարձը է քան զամենայն կարօտու[թի  
 քո | Եր յուսահատ յիմի ՚ի միայն  
 զօրու[թեան անձին քո այլ լեր ապա-  
 հով յիմի ընդ օգն[թուք փրկչի  
 քո: Հաւատալով համարձակեաց առ  
 ամինչ ապաւինու[թք ՚ի նա յայնժամ  
 կարես դու զիմ ՚ի ձեռն հորին օ-  
 ժանդակու[թէ: Բստ որում մեղաւոր  
 ես, չես արժանի հորին շնորհաց,  
 այլ և չես անընդունակ ստանալ զայն:  
 Մի ասեր դու ընդ կայենին. մեծ է  
 յարցանք իմ քան զ[թողուլդ զիս:  
 (Պննդ. 15): Յիմ մեղաց մար[թ է  
 գտանել զազատու[թիւն: Ար ոչ ծու-  
 լանայ յանզղջու[թէ և յանհաւաստու-  
 [թեան, այլ դիմէ առ Բրիստոս, նա  
 մի դատապարտեցի վասն մեղաց ինչ  
 Կանապէս մի կարծեր դու, [թէ ոչ  
 կարես համարձակիլ կալ առաջի նք  
 յայդպիսի անառակու[թէ և յանար-  
 ժանաւորու[թեան, որպէս դու ձա-  
 նաչես զանձն. [թէ դու պարտիս նախ

ուղղելն կամ գէթ դնել զսկիզբն  
 ուղղութե այնմիկ, զի եղիցիա նմա  
 հաճելիս Քանզի այդպիսի ապաւի-  
 նութեամբ ՚ի սեպհական կարօղութե  
 և ՚ի ներգործութիւնս անձինքոյ,  
 դու արգել դնես բժշկութե քում,  
 կամ դժուարացուցանես զայն նման  
 այնմ, որ տառապի մարմնական խօ-  
 թութք, բայց ոչ փութայ դիմել առ  
 օղնութիւնս բժշկին, այլ ջանայ նախ  
 ինքնին նպաստամատոյց լինել անձինս:  
 Սա զայլ ինչ ոչ խնդրէ ՚ի քէն,  
 բաց յայնմանէ, զոր ինքն գործէ ՚ի  
 քեզ (Հով. ԺԵ. 4. 5: ՓԵՆ Թ. 12.  
 15): Սախ պարտ է քեզ զզջմամբ  
 խնդրել ՚ի նմանէ զթողութիւն մե-  
 ղաց և դտանել զայն. և առջա ընդ  
 հաղորդել քո ընդ նմա ստասցիս զամ-  
 բութիւն և զգօրութիւն առ ՚ի մեր-  
 ժել զմեզս: Սպաքէն փութան, զի-  
 ւորդ և կարես, փութան այսօր եթէ  
 ձայնի նորա լուիցես (ԱԵՆ Դ. 7.  
 13. 15: Դ. 7.) ամ պակասութք և  
 տկարութք քով առ այս օղնական,  
 որ ոչ զոք մերժէ յինքենէ, և մատն

զանձն քո նմա 'ի բժշկութիւն Քանդի  
այն ինչ եկեսցես, ընկալեալ եղիցիս.  
և եղիցի վասն քո ուրախութի յեր-  
կինս, որպէս վ'ս մեղաւորի, որ ապաշ-  
խարիցէ (Պատմ. ԺԵ. 7. 10.) Սեբ  
կրկնեմք բանիւք սրբոյ առաքելոյն  
սօղոսի (Հատմ. ԴԷ. 5.) որ ոչն գոր-  
ծիցէ՝ բայց հաւատայցէ յայն, որ ար-  
դարացուցանէ զամբարիշտս (յն, որ  
տայ զԹողութիւն միայն այնոցիկ, որք  
հաւատանն 'ի Յիսուս Քրիստոս)  
համարին հաւատք նորա յարդարութիւն  
Խաչեալ աւազակն, որ ընկալաւ, ի  
սեպհական խոստովանութեան իւրոյ,  
զարժանին ըստ գործոց իւրոց, վասն  
հաւատոյ իւրոյ ընկալաւ 'ի փրկչն  
մերմէ զխոստումն. ամէն ասեմ քեզ.  
այսօր ընդիս իցես 'ի դրախտին  
(Պատմ. Իգ. 44. 45.) Նոյնպէս և  
այն տառապեալն ծանրութեամբ մե-  
ղաց իւրոց մաքսաւոր Թէև բարի  
գործովք իւրովք ոչ ջնջեաց զա-  
ռաջին, յանցանս իւր, զի և ջնջել  
իսկ ոչ կարէր, այլ ըստ վճռոյ այնո-  
րիկ, որ փորձէ զսիրտս, էջ 'ի տուն

իւր արդարացեալ քան զփարիսեցին  
 որ բարձրացուցանէր զանձն (Ղ<sup>ա</sup>-հ.  
 ԺԵ. 14:) Եւ արդ՝ հաւատան միայն  
 ՚ի նա, որ նմանապէս վասն քո չար-  
 չարեցաւ և մեռաւ. և ստասյիս զագ-  
 նութիւնս Քանզի ոչ կամի Տէր, զի  
 կորիցէ որ, այլ կամի, զի ամ մար-  
 դիկ փրկեցին (Ք. Պէր. 7. 9: ւ.  
 Տիճ. Թ. 4: Եւզէ. ԺԵ. 23. 32.) և  
 ասէ ցքեղ բժիշկն հոգւոց մերոց,  
 զայն, զոր ասաց երբեմն այնոցիկ, որք  
 խնդրեցին ՚ի նմանէ զբժշկութիւն  
 մարմնական խօթութեց. որպէս հա-  
 ւատացերդ, եղիցի քեզ (Ս<sup>ա</sup>ր. 11. 13:  
 ԺԵ. 28: Ղ<sup>ա</sup>-հ. 11. 50:) կամ  
 զայն, զոր ասաց այնմ զըջացեալ կը-  
 նոջն մեղաւորի. Թողեալ լիցին մեզք  
 քո. հաւատք քո կեցուցին զքեզ՝  
 երթ ՚ի խաղաղութիւն (Ղ<sup>ա</sup>-հ. 11. 5.  
 48. 50:) Քանզի, որ հաւատայ յորդի  
 ընդունի զկեանս յաւիտեանականս. նա  
 արդէն իսկ երջանկանայ, զի արդէն  
 իսկ յայս երկրի բացեալ է մոռտ ՚ի  
 յաւիտեանական արքայութիւնս անառն  
 մերոյ (Յի Քի (Յ<sup>ա</sup>-հ. 7. 36: Ք. Պէր.

Թ. 11) Ը. յս է պատուիրանն աստու-  
 ծոյ, զի հաւատասցուք յանուն որդե-  
 ւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. և  
 մեք ոչ թէ միայն յուսամք, այլ և  
 գիտեմք, թէ կեանս յաւիտեանականս  
 ունիմք, եթէ հաւատամք յանուն որդե-  
 ւոյն աստուծոյ (Թ. 3. Գ. 23: Ե.  
 13: 3. Թ. Թ. 31) Այլ վասն այսորիկ  
 որչափ առաւել բազմացան 'ի քեզ  
 մեղք 'ի դատապարտութիւն քո, այլ  
 սակայն շնորհքն աստուծոյ 'ի Յի-  
 սուս Քրիստոս, որք պարտին լինել  
 քաժին քո յետ զղջման և հաւատոյ  
 առաւել ևս յաւելան՝ տալ քեզ զժա-  
 մանական և զյաւիտեանական եր-  
 ջանկութիւն (Թ. 20: Ե. 20: Թ. Թ.  
 Թ. 7: Թ. 7) զի հաւատալով  
 այսմ վկայութեան աստուծոյ՝ դու  
 փառաբանես զնա և առնես զհաճոյս  
 նորա: Ինչ հակառակն, դու հայհոյ-  
 էիր արդեօք զաստուած և տրտմե-  
 ցուցանէիր զնա, երբ կամէիր դու  
 կարծել, թէ նա վասն մեղաց քոց  
 ատէ զքեզ, կամ ըստ մեղաց քոց կա-  
 մի մատնել զքեզ 'ի կորուստ: Աս



ատաւն. Վասնորոքն հարկորդութից լինելուցն  
 ամենայնի, զոր արդեամբք յերկրիս  
 բարեւոյ Վասն Տէր Քրիստոսո

Ը. ՍԼ հաւասան 'ի Յիսուս Քրիս-  
 տոս լինի միայն յայնժամ վասն մեր  
 փրկաւէտ և բարեշնորհ, յորժմ կեն-  
 դանի է, (յն, յորժամ ունի զհաստատ  
 և զհղօր ներգործութիւն 'ի կամս և  
 'ի գործս մեր): Հաստատ իմացողու-  
 թիւնն, թէ մարդ վասն ամ հոգեո-  
 րական երջանկութեան իւրոյ պար-  
 տական է շնորհացն աստուծոյ, որ ա-  
 մենեին ազատ է, և որում ինքն չէ  
 արժանի, որ և պարգևեալ է նմա  
 միայն վն Յի Քրիստոսի՝ այս է  
 գլխաւոր և անշուշտ հարկաւորութի  
 հաւատոյ. սակայն լոկ ճանաչումն այ-  
 սրբ սկզբնական ճշմարտութեանն ա-  
 լետարանի չէ բաւական Պարտ է  
 միաւորել ընդ այնմ զանկասկած վըս-  
 տահոլութիւն և զապաւինութիւն.  
 ևս և զկամս և զգործս. որք են հա-  
 մաձայն ընդ այդպիսի հաւանութեան  
 և յուսոյ մերոյ: Բանզի հնազանդու-

Թիւն է հմանապէս էական յատկուի  
 հաւատոյ (Հով. Գ. 5: ԺԵ. 18:) Աջ  
 ոք կարասցէ ճշմարտապէս հաւատալ  
 ՚ի Յիսուս Քրիստոս իբրու ՚ի հաշ-  
 տեցուցիչ և փրկիչ իւր, եթէ ոչ ՚ի  
 մի և ՚ի հոյն ժամու ՚ի բոլոր սրտէ  
 հնազանդ լինիցի նմա, իբրու ար-  
 քայի և Տ՛ն իւրում: Ա՛յ՛ արդ՛ ճշմար-  
 իտ հաւատն քրիստոնէի ոչ այլ ինչ  
 է, բայց կատարեալ հնազանդութիւն  
 քրիստոնէականն վարդապետութե վ՛ս  
 փրկութեան, ըստ ամենայն ընդար-  
 ձակութեան նորին, և զգուշաւոր կա-  
 տարումն կանոնաց և պայմանադրու-  
 թեանց այնմ սահմանելոց: Այդպի-  
 սի է հաւատն յոր հոյին աչք Տ՛ն  
 (Աբէճ. Ե. 3.) և առանց այդպիսի  
 հաւատոյ ոչ է կարելի հաճոյ լինել  
 աստուծոյ: (Աբբ. ԺԳ. 5. 6:) Սուրբ  
 աստուածաշունչ զիրքն ոչ յիշէ զմե-  
 ղըս ինչ, որ առաւել արժանի իցեն  
 դատապարտութեան, քան զանհաւա-  
 տութիւն (Սաբէ. ԺԴ. 16: Հով. ԺԳ.  
 8. 9. Գ. 18: Ը. 24:) Ս՛ն է ազբիւր  
 այլ ամենայն մեղաց: Ա՛նհաւատութի



ջի՛ յանցանք մտայ՝ այսինքն է՝ տհաճ  
 սրահասու թիւն գիտութեան, կամ ան-  
 մեզ մոլորութիւն որ, ազատէ շտը-  
 գէտս և շմոլորեալս ՚ի սրտոյ (Ն-  
 ու՛ ժ. 14: Յ՛՛ թ. 41: ԺԵ. 22.  
 24:) այլ այն է մեղանչումն կամաց և  
 սրտի, որում անմարթ է ներել  
 Վանդի անհաւատութիւնն՝ է ան-  
 հնազանդութիւն ընդդէմ աստուծոյ  
 և կամակոր ընդդիմամարտութիւն  
 ընդդէմ սուրբ յաւետարանի անդ  
 յայտնեալ կամաց նորա, զոր ճանաչել  
 իւրաքանչիւր ոք ունէր զժամանակ  
 և դբնաւորութիւն. սակայն ո՛չ կա-  
 մեցաւ գիտել և հետեիլ այնմ (Մ՛՛ թ.  
 37: Յ՛՛ Ե. 40: Ը. 42. 47:)  
 Հաւատարիմ է բանս և ամբ ընդու-  
 նելութե արժանի, զի Յիսուս Վ՛ն  
 եկն յաշխարհ փրկել զմեղաւորս (մ. ՏԻՃ.  
 մ. 15.) և զի այս Յիսուս Վ՛ն  
 եղև մեզ մեղաւորացս իմաստութիւն  
 յաստուծոյ, արդարութիւն և փրկուի  
 և սրբութի (մ. Վ՛՛ մ. 50:) Այլ  
 զորպիսի օգնւտ գտանես դու, և թէ  
 գիտես զայս բան և ճանաչես զայն



լինել ճշմարիտ, բայց ո՛չ լինիս այնմ  
 հասկանդ. ո՛չ սեպհականես զայն ան-  
 ձին քու՛մ 'ի հաւատս և ո՛չ վարիս  
 համաձայն ընդ հմին. եթէ դու ո՛չ  
 խոստովանիս, թէ ես ևս եմ մեղաւոր,  
 ես և կարօտ էի, զի և վասն իմ Եւ  
 Քրիստոս եկեցցէ յաշխարհ. և եթէ  
 դու ո՛չ հաւատաս և ո՛չ կարես փոր-  
 ձիւ անձին ասել. թէ և զքեզ խե-  
 լամուտ առնէ նա 'ի փրկութիւնս,  
 թէ և դու 'ի ձեռն միջնորդութեան  
 նորա արդարանաս և լինիս հաղոր-  
 դակից շնորհացն աստուծոյ, թէ և  
 վասն քո չարչարեցաւ նա և մեռաւ  
 'ի վերայ խաջին (Մատթ. Բ. 20:  
 Մէ. Բ. 2.) թէ 'ի նմանէ միայն  
 ընկալեալ ես և ունիս դու զսրբունի  
 քո զի կարացես կեալ առաջի նորա  
 յարքայութեան. նորա և ծառայել  
 նմա յաւիտեան արդարութե՛ք՝ անմե-  
 ղութեամբ և երջանկութեամբ, և  
 թէ զնմանէ և եթ զոհանաս վասն  
 ազատելոյ զքեզ յիշխանութենէ,  
 'ի տիրապետութենէ և յամենայն կո-  
 րստական բերմանց մեղաց: Ա՛հ արդ՛



ասան. առ ի վ երթայց, եթէ ոչ առ  
 քեզ տէր: Վ քեզ միանում է ար-  
 դարութիւն և փառք իմ (Լուսն. խն.  
 25.) դու միայն բանս կենաց յաւի-  
 տենակաց ունիս, և ես հաւատամ և  
 գիտեմ, եթէ դու ես Քրիստոսն,  
 խոստացեալ փրկիչն աշխարհի, որդի  
 աստուծոյ կենդանւոյ (Յով. 7. 68.  
 69: Թէո. Գաղատ. ք. 20:)

### ԳՎ ԱԽԻՍ. Ժ.

Լուսնոց նորագոյնն որտէ՞ն վերստին  
 ծննդէնն ոչ առ հարէ փեռանել զարտոյ-  
 աւինն աստուծոց: Վ վերստին ծնաւորն  
 լինի՞ ՚ի թեզ հոգով որքով ՚ի չեան  
 աւետարանի, որպէս և որք ճշրտա-  
 ըւածք:

Հաւատս այս յորդին աստուծոյ լի-  
 նի միայն անդ. ուր է ճշմարիտ զըզ-  
 ջումն կամ դարձումն և վերածնուի  
 սրտի: Քահազի նոր ծնունդ կամ նոր  
 կեանք անուանեն սուրբ Լուսնա-  
 ծաշունչ գիրքն շայն մեծ և երջա-



Կիկ փոփոխու[թի, որ Լինի ՚ի մարդ  
 յասականեալ մեզօք, յորժամ բովան-  
 դակ միտք հորա այնպէս ուղղին, և  
 առ բարին վերադառնան, զի հա ՚ի  
 բաց դնէ յանձնէ զամենայն սէր և  
 հահամտութիւն, առ մեղս, որ յառա-  
 ջագոյն ցայն վայր տիրապետէր և  
 յաղթէր նմա. և ընդ հակառակն  
 բոլորով սրտիւ՛ սիրէ զբարին, զգալով  
 յինքեան բաւական զօրութիւն առ ի  
 ևս քան զևս կատարելագործիլ ՚ի  
 կատարման կամացն, աստուծոյ. (Ա.  
 Պէ. ք. 21—23: Յէ: Թ. 18: Կէ. Թ.  
 3. 4) Պարձումնս այս անուանի  
 նմանապէս շինումն հոր և մաքուր  
 սրտի ըստ պատկերի Թոյ, անուանի  
 սիրտ հոր, հոգի և միտք հոր, [Թիփա-  
 տութի սրտի, զգե՛նուլ զնոր մարդ. և  
 նորոգումն մտաց կամ հոգւոյ: (Ս. Գ. Թ.  
 12: Եւէ: Լ. 26. 27: Թ. ( ) Եւ.  
 7. 6: Եւէ. Գ. 20—24: Ա. Գ. Գ.  
 10: Զ. Թ. 29: Ժ. 2.) Պարձումնս  
 այս անշուշտ հարկաւոր է առ ՚ի մը-  
 տանէլ յարքայութիւնն Թոյ, Կոյ, վասն  
 ժառանգելոյ զամենայն իրաւունս

քրիստոնէի և զմամ զերջանկուի նո-  
 րին, որպէս յայսմիկ, նոյնպէս և 'ի հան-  
 դերձեալ կեանս: (Յովհան. 7. 4. 5)  
 Ար ոչ զգայ զայն յի. բում սրտի, նա  
 ոչ ունիցի զիրաւունս վասն մտանե-  
 ւոյ յայս արքայութիւն մոյ: Քանզի  
 անկարելի է զի 'ի բարեշնորհ վի-  
 ճակի անդ առաջի մոյ տիրապետող  
 մեզք ինչ ունիցի զտեղիս Սասն  
 մտանեւոյ յարքայութիւն նորա՝ ոչ  
 օգնեն մեզ ոչ ծնունդ կամ ծագումն  
 'ի բարեպաշտ նախահարց և ծնողաց  
 և ոչ պահպանութիւն արտաքին կա-  
 նոնաց և ծիսից (Թեո. Ղ. 1-5. Ժ. 2.  
 23-25: Յով. 12. 13: Վաղար. 7.  
 28: Ե. 6: 7. 15: Առդ. 7. 10.  
 11: Արեմ. 5. 1-5) թէպէտ և լսե-  
 ռք ևս և գիտիցէ լիովին զվարդա-  
 պետութիւնն Յի, նա և կրթիցէ  
 զայլս յայնմ, և անուամբ նորա զօրու-  
 թիւնս և նշանս բազումս արասցէ,  
 սակայն և այնպէս կարելի է զի այն-  
 պիսին համարիցի առ այնոսիկ ողոր-  
 մելիս, որոց նա յաւուր գալտեան  
 իւրոյ 'ի դատաստան՝ ասասցէ, ոչ գի-

տե՛ժ զձեզ ուստի էք. 'ի բաց կացէք յինէն, որք զործէք զանիրաւութիւն: (Մատթ. է. 22. 23: Ղուկ. ԺԳ. 26. 27.) Սակայն այս մեծ փոխարկութիւն հոգւոյ մտաց և կենաց մարդոյ է միմիայն զործ այ և հոգւոյ հորա (Փիլ. ք. 13:) Ս'ի կարծեսցէ որ, թէ սեպհական զօրութիւն կամ ջանիւք անձին կարիցէ հասանել այնմ: Ը՛ծ առնէ զայն 'ի ձեռն վարդապետութեանն աւետարանի, զոր ինքն յայտնեաց: Օ այս իսկ ասէ սուրբ առաքեալն պետրոս. ծնեալ էք վերստին ո՛չ յապականութեան սերմանէն, այլ յանապակացուէն (ամենահզօր) բանիւն կենդանի և մշտնջենական այ, ինչ, բանիւ՛ որ 'ի հընազանդս այնմ հաստատի և ցուցանի իբր յաւիտեան ճշմարիտ և ազդու վարդապետութիւն (մ. Պետր. մ. 23. 25): Բանզի որ հոգւով մեռեալ էր 'ի մեղս, բանիւն կենդանացի և յարիցէ առ նոր հոգեորական կեանս: (Եփե. ք. 4. 6: մ. Յով. Գ. 14.) Սախձան սուրբ մկրտութեանն նմա-

նապէս է այն՝ զի նով իմբ եղիցուք  
 վերածնեալ մարդիկ. քանզի 'ի ձեռն  
 այնր ընկալեալ լինիմք 'ի ժողով  
 արտաքին, քրիստոնէական եկեղեցւոյ,  
 որ եթէ բանն աստուծոյ քարոզի  
 յայնմ բովանդակ պարզութեամբ և  
 մաքրութեամբ, է կրթարան սրբուէ  
 և բարեպաշտութեան. և 'ի վերայ  
 այսորիկ՝ մկրտութիւնն ո՛չ միայն դնէ  
 'ի վերայ մեր զպարտաւորութիւն դարձ-  
 ման և վերածնելութեան որտի, այլ  
 և տայ զզօրութիւն առ այն, և 'ի  
 միասին ընդ այնմ պայմանաւ ճշմարիտ  
 հաւատոյ՝ հաւաստի առնէ զմեզ յաճ-  
 ային շնորհս, և ընծայէ մեզ զնոսին:  
 (Հոռ. գլ. 3. 4: Գաղ. գլ. 26. 27:  
 Կոր. Բ. 12. 13:) Այսն այսր իսկ սքե-  
 առաքեալն պետրոս (Գործ. Բ. 37.  
 38:) երբ քարոզէր յերուսաղէմ՝ ուն-  
 կնդրաց իւրոց, որք 'ի բանիցն հորա  
 զղջացեալ 'ի սիրտս իւրեանց հար-  
 ցին ցնա. զի՞ ոչ գործեսցուք, զի փրկ-  
 կիցուք. պատասխանի ետ հոցա. ա-  
 պաշխարեցէք և մկրտեսցի իւրաքան-  
 չիւր ոք 'ի ձէնջ յանուն տեառն (Յի

Քրիստոսի 'ի ԹողուԹիւն մեղաց, և ընկալ ջիբ զաւետիս հոգոյն սրբոյ (Պէ. 21, Լէ. 26) Օ այս ամենայն ասաց կարճօրէն սբ առաքեալն պօղոս այսու բանիւք. ոչ 'ի գործոց արդարութեան, զոր արարաք մեք՝ (զի էաք երբեմն և մեք, անմիտք, անհաւատք, մոլորեալք և ծառայէաք ցանկութեանց,) այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց ըզմեզ 'ի ձեռն աւազանին միւս անգամ ծննդեանն և նորոգութեան հոգւոյն սրբոյ, իմ, նորոգութեան. որ Լինի 'ի մեզ հոգւով սրբով (Պէ. 3. 5) Նիկոտիմոսին պատասխանի ետ (3-սուս վճռապէս, Թէ հա նմանապէս ոչ կարէ տեսանել զարքայութիւնն աստուծոյ, իմ. գտանել զԹողուԹիւն մեղաց և զերջանկութիւն յաւիտենական, եթէ ոչ ծնցի վերստին. որ լինի ջրով և միաւորեալ ընդ այնմ ներգործութեք հոգւոյն սրբոյ (3-վ. 7. 5) Օ այս իսկ ուսուցանեն մեզ անցք փիլիպպեցի բանդապետին (4-րժ. Ժ. 32—34.) Երբ բանն Տն ասա-



ցաւ հմա՝ մկրտեցաւ ինքն և իւրքն  
ամենեքեան և շինի այսր միայն ասի  
զնմանէ թէ ուրախ եղև ամ տամբն՝  
հաւատացեալ յիմ:

## ԳՎ ՈՒՎՍ ԺԲ.

Փրկուէս էրառուին վարդապետութեանն  
Յէ Քն վան վերսին ծննդեանն և  
վան ճշմարիտ էութի, նշանաց և ներ-  
գործութից նորին:

Եթէ և դու իբրև զնիկողիմոս  
զարմացմամբ և երկբայութիբ հարց-  
ցես. թէ զիմորդ կարէ մարդ ծնա-  
նիլ՝ որ ծերն իցէ և զիմորդ մարթ  
է այդմ լինիլ (Յով. 4. 9.), լեր  
բաւական հետազայ վարդապետութի  
զոր ինքն իսկ Յիսուս Քրիստոս  
տուեալ է մեզ (անդ ևս 49.):  
Հոգևոր վերածնելու թիւնն, որ լինի  
ի մարդ հոգևով սրբով՝ այն՝ ոչ է հա-  
սանելի զգայարանաց, որպէս մարմ-  
նաւոր ծնունդ հորա. այլ սակայն  
այն՝ ոչ սակաւ քան զյետինն է ճշ-

մարիտ և ստոյգ, որպէս և լազում  
 ինչ, զոր մեք զգայարանօք մարմնոյ,  
 զոր օրինակ, տեսանեւեօք, նշմարել  
 ոչ կարեմք, է ճշմարիտ և ստոյգ,  
 Վման այսմ թէպէտ ոչ տեսանես  
 դու զհողմ և ոչ գիտես, թէ ուստի  
 գայ և յո երթայ, սակայն դու ոչ  
 երկբայիս ընդ եղանեւոյն այնր: Քան-  
 զի դու հաւաստի լինիս յայնմ, կամ  
 շնչով, կամ այլ ինչ ներգործութի  
 այնր: Սոյնպէս լինի և վերածնելու-  
 թիւն. թէ որպիսի օրինակաւ ծա-  
 գիցի սա, կամ լինիցի՝ ոչ որ կարե  
 տեսանել աչօք մարմնոյ, այլ պարզու-  
 պէս իմանի ներգործութեամբ իւ-  
 րով:

Սակայն զի՞նչ են այսօքիկ ներ-  
 գործութիւնք: Ան այնօքիկ, որք այլ  
 կերպիւ՛ ՚ի սուրբ գիրս անուանին  
 պտուղք բարիք արժանի տպաշխա-  
 րութեան, պտուղք արդարութեան,  
 պտուղք հոգւոյ, ցոյն այնպիսի գործք,  
 որք լինին հոգւով սրբով աստուծոյ  
 ՚ի փոխարկեալ նովաւ իսկ սրտի մար-  
 դոյ. (ՍճԻ: 7. 8: Է. 16: ԺԲ. 33:



Փիլ. Թ. 11: Առ. Ե. 9.) միով բա-  
 նի՛ւ՝ ամենայն քրիստոնէական ասա-  
 քինութիւնք և կատարելութիւնք,  
 որոց շումանս սուրբ ասաքէալն, պօղոս  
 'ի Թուղթն աս զաղատացիս (Ե. 22.)  
 անուանէ. զոր օրինակ, սէր աս Աճ  
 և աս Յիսուս Վրիստոս, սէր աս  
 մերձաւորս (Առ. 14: Թ. 14: Թ. 1.  
 և 12) խնդութիւն, խաղաղութիւն,  
 երկայնամտութիւն, բարութիւն, քաղց-  
 րութիւն, հաւատք, հեղութիւն, ժուժ-  
 կալութիւն, որով նա, (Գ. 19.  
 20.) 'ի բաց դնէ զգործս մարմնոյ,  
 որք զրկէն զմեզ գլխովին 'ի մաս-  
 նակցութենէ ժառանգուէ արքայու-  
 թեանն Թ. 1:

Ըստ այսմ վերստին ծնեալն փոր-  
 ձառութեամբ անձին իսկ իւրոյ հա-  
 լաստի լինի, որպէս ուսուցանէ զմեզ  
 Յիսուս Վրիստոս 'ի յիշեալ խօսակ-  
 ցութեան անդ ընդ նիկոտիմոսի, ե-  
 թէ նա ամենեւին եղև այլ մարդ,  
 քան զոր յասաջն էր, թէ նորոգե-  
 ցաւ սիրտ իւր դրութիւն, միտք և  
 ամենա ին զօրութիւնք ոգւոյ իւրոյ:

Քանզի ո՛չ ևս խոկայ նա, որպէս  
 ցայս վայր խոկայրն զերկրայնոց՝ այլ  
 զվերնոց, ո՛չ ևս սիրէ շաշխարհս և  
 զոր ՚ի նմա. հաւատովք իւրով յաշ-  
 թէ նա աշխարհի, որ ցայն վայր  
 յաշթէրն նմա (Աղո. 7. 2. 4: iii.  
 Յով. 15: Է. 4: Հով. 7. 14:  
 Յայտն. Ժբ. 11.): Ըներկբայ և որո-  
 շիչ գծագրութիւնք և նշանք մեծի  
 փոփոխութեանն, որ եղև ՚ի նմա,  
 այնչափ են յայտնի և սարզ՝ մինչև  
 այլոց ևս են նշմարելի, և այն ո՛չ մի-  
 այն այնպիսեաց, որք նման նմին ե-  
 դեալ են մասնակիցք շնորհայն Մ. ՚յ,  
 այլ և այնպիսեաց, որք տակաւ չեն  
 վերածնեալք՝ այլ մածեալ են. դեռ  
 ևս ընդ աշխարհի: Աւստի չէ սարտ  
 քեզ ունիլ զցանկութիւն քննելոյ,  
 թէ որպիսի օրինակաւ լինի այս.  
 (Քանզի այս ո՛չ ածէ առ նպատակ,  
 իսկ դիւրաւ կարէ հեռացուցանել  
 յայնմանէ). այլ պարտ է քեզ փորձել  
 զայս և ՚ի գործ դնել զառաջարկէն  
 քեզ հնար վասն ժամանակական և  
 յաւիտենական փրկութեան քոյդ հոգւոյ:

Արբ դու լսես, թէ ողորմու թեան  
 և փրկու թեան քում կարես ակնունիւ  
 միմիայն 'ի կենդանի հաւատոց 'ի  
 Յիսուս Քրիստոս, որ վասն քո ամ-  
 քարձաւ 'ի խաչ (Յով. 4. 14. 15.),  
 գնուցէ, զարմացիս ընդ այս ոչ սա-  
 կաւ, քան զհարայելացիսն, յորժամ  
 հրամայեցաւ նոցա հայլի յօձն պղնձի  
 ահդ, զոր մուսէս 'ի վերայ նշանակի  
 եդ առաջի նոցա, զի ապաւինեալ  
 յաստուած, որ հրամայեաց զայս հնար  
 առողջացիսն 'ի մահաբեր հարուա-  
 ծոց օձից (Թառ. 10. 9): Իսկ  
 զորպիսի օգուտ ունէին նոքա՝ եթէ  
 իմաստասիրեալ հարցանէին. իրպէս  
 մարթէ այսմ պատահել զիմրդ հը-  
 նար է այսոցիկ լինել: Կամ թէ մի  
 թէ չէ՞ր պատշաճ և ճշմարիտ դնել  
 'ի վերայ վերաց զորպիսի և իցէ դեղ  
 առողջարար, կամ ընդունիլ զինչ և  
 իցէ հակառակ թուոյ: Աստուած  
 ընտրեաց զայս հնար. և որ կամէր  
 մնալ 'ի կենդանու թեան՝ ոչ համար-  
 ձակէր 'ի գործ դնել վասն փրկուե  
 իւրոյ զայլ ինչ, այլ միայն զայն որ



հրամայեալն էր: Սոյնպէս և հոքա  
ամենեքեան, որք սրբութեամբ և ՚ի  
բոլոր սրտէ երթան զհետ սխառու-  
րանացն աստուծոյ և հաւատան ՚ի  
նա, որ խաչեցաւն, մի կորիցեն՝ այլ  
ունիցին զկեանս յաւիտեանակահա:

### ԳՎ ՈՒՎՍ ԺԲ

Թէ զիւրք վերածնելալ վայելին յերա-  
տանս որդեգրութիւնն աստուծոյ: Ար-  
դիւնն հանգամանք որտի նոցա և որ-  
դիւնն ազօնի աստուծոյ պատգ-  
նոցին:

Ար ունի զվերոգրեալ հանգամանս  
ոգւոյ վերածնեալ մարդոյ և համե-  
մատէ ընդ այնմ զամենայն գործս  
իւր, զնա անուանէն սուրբ աստուա-  
ծաշունչ գիրքն՝ որդի իմ կամ յոյ  
ծնեալ (Յով. Թ. 12. 13.): Գեղե-  
ցիկս և ճշմարտապէս ասէ առաքեալն  
(Յով. 7. 1.). Տեսէք՝ զորպիսի սէր  
չնորհեաց մեզ հայր, զի որդիք աս-  
տուծոյ կոչեսցուք և եմք: Ա՛հ զայսո-



սիկ արժանագուլ իրաւունս որդէգը-  
քուլթեանն աստուծոյ՝ զտարեմք ՚ի  
ձեռն Յիսուսի Քրիստոսի, եթէ  
հաւատամք ՚ի նա: Արք ընկալան ըշ-  
նա՝ ետ հոցա իշխանութիւն որդիս  
աստուծոյ Լինելն քի, որոց հաւատան  
յարուն նորա: Արդիք աստուծոյ սի-  
րեն զաստուած՝ որպէս զհայր իւր-  
եանց, անկեղծ սիրով առնեն զկամս  
նորա և ջանան յառաջադէմ Լինել  
՚ի սրբութեան. զի ևս քան զևս ե-  
ղիցին հման հմա Մ. մեհասրբոյն (մ.  
Պէ. 16: ք. Պէ. 4.), իբրև  
զամենայն բարի որդի, որ սիրէ ըշ-  
հայր իւր. սիրով հնազանդին հմա և  
կրթին ըստ օրինակի նորա (Ս. Գ. Ե. 12.): Արք ունին զայդպիսի որդի-  
ական զգացողութիւնս՝ ժառանգեն  
զիրաւունս որդէգրիլ նմա. Նորա  
փոխարէն սիրեալ են յաստուծոյ, որ-  
պէս որդի բարի սիրի ՚ի բարի հօրէ  
իւրմէ և ունին առ յաւիտեան զհո-  
թերի ակնկալութիւն ընդունիլ ըշ-  
թողութիւն մեղաց և Լինել հազոր-  
դակից ամենայն ծանրագին և մեծա-

մեծ աւետեացն աւետարանի (iii. Յ. Է. Բ. 29: Գ. 1. 10.): Քանզի, եթէ մեք հաւատովք 'ի Յիսուս Քս եղաք երանելի որդիք աստուծոյ, վասն այնորիկ իսկ և եմք ժառանգք (հաղորդակիցք ամենայն անապական գանձուց երկնից), ժառանգք աստուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի, որ է անդրանիկն 'ի մէջ ամենայն երանելի որդւոցն աստուծոյ (Հ. Գ. Բ. 11: Գ. Գ. 7: Գ. Գ. 18.):

Մտաբերիկ բարեպաշտ, որդիական հանգամանք սրտի, որ լինին 'ի հաւատացեալս հոգւոյն աստուծոյ՝ նմանապէս զարթուցանեն զնս և ընծայեն նոցա զհամարձակութիւն, ըստ օրինակի Յիսուսի Քրիստոսի՝ աներկիւղ, որպէս որդի առ հայր իւր՝ դսունալ լիովին յուսով յամենայն հոգեւոր և մարմնաւոր կարօտութիւնս իւր աղօթիք առ աստուած, և լինել միշտ յաներկբայ ապաւինութեան թէ նա պարգևեայէ նոցա զամենայն որ վասն նոցա կարէ լինել փրկուէտ



և օգտակար (Հովհ. Է. 14: Վարդապ. Դ. 6.):

Յայնժամ կարդասցեն՝ և աստուած լուսնից է քեզ. և մինչդեռ խօսեսցիս՝ ասասցէ՝ [Ժէ ահաւասիկ հասեալ կամ (Առայ. 8 Ը. 9.): Յոյժ զօրաւորք երևաղօթք արդարոց յօգնականութիւն (Յով. Ե. 16): Կարդացին արդարք առ Տէր, և Տէր լուաւ նոցա. յամենայն նեղութեանէ նոցա փրկեաց ընդ նոսա (Սող. 1 Գ. 18): Կարդասցես առ իս յաւուր նեղութեան քո՝ Եւ փրկեցից զքեզ. և դու փառաւոր արասցես զիս (Սող. Խ[Ժ. 15): Սերձէ տէր առ ամենեւեան՝ ոյք կարդան առ նա. առ ամենեւեան, որք կարդան առ նա ճշմարտութեամբ: Օ կամս երկիւղածաց իւրոց առնէ տէր. աղօթից նոցա լսէ՝ և կեցուցանէ զնոսա (Սող. Ճ[ս[Դ. 18. 19: Գե. Յով. Ժ. 31.): Սա կարօղ է առաւել քան դամբ ինչ առնել յաճախութք քան զոր խնդրեմք և իմանամք (Արե. Գ. 20): Յորժամ կարդասցին առ նա. ծանիցեն, [Ժէ նա է աստուած նոյա

(Սող. ճե. 10): Մինչ չե կարդա-  
ցեալ իյէ հոյա՝ ես լուայց նոցա, և  
մինչ դեռ խօսիցին՝ ասացից՝ [Ժէ  
զի՞նչ խնդրէք (Սող. կէ. 24):

Արդ՝ եթէ որդիք աստուծոյ ա-  
ռանց երկիւղի և երկբայու թեան  
զայդպիսի խոստմունս պատուական  
հօրն իւրեանց երկնաւորի, որք զը-  
տանին ամենուրէք ՚ի բան նորա՝  
ձգեսցին առ ինքեանս՝ կարեն յամե-  
նայն ժամ աղօթել հաւատովք (Յով.  
մ. 6. մ. Տէճ. ք. 8: Սող. ժմ.  
24.) քանզի յորժամ հոքա յարտաքին  
կամ ՚ի ներքին կարօտութիւնս իւր-  
եանց՝ մերձեանս աղօթիւք առ Ա՛ծ  
յուսան յամենայն ժամ ՚ի բան ինչ  
խոստման. որով վստահանան, և յորոյ  
վերայ հիմնեն զապաւինութի իւր-  
եանց վասն լսելի լինելոյ աղօթից  
իւրեանց (Սող. իղ. 8: Սող. լէ.  
9. 11. 12.): Հսկումն և աղօթք են  
հրամայեալ ՚ի տեառնէ մերմէ. ան-  
բաժան և սերտ լծորդեալ հասարք,  
որպէս ընդդէմ ամենայն վտանգից և  
փորձանաց, հոյնպէս և ընդդէմ ամե-



նայն զբաղեցուցիչ հոգացողութեանց  
կենցաղոյս, որք ծագին ՚ի թերահա-  
ւատութենէ և խոչ ընդ սան լինին  
ճշմարիտ և հարկաւոր հոգածութե-  
վասն հոգւոյ (Սող. իդ. 41: Ղ. 1-4.  
Իա. 36: Սող. 1-4. 33:)

Սակայն ճշմարիտ հաւատք կարէ  
բնակիլ և յայնպիսի սիրտս, որք դեռ  
ևս ոչ վայելեն յանթերի խնդութե-  
հաւատոյ, կամ որոց պակասի տակա-  
ւին միսիթարիչ, խաղացուցիչ և կա-  
տարեալ վստահութի յայն Վարդի  
ոչ միայն այս վստահութիւն և ապա-  
ւինութիւն կարէ լինել նշան հաւա-  
տոց, այլ և այն ջերմեռանդութիւն  
և մտադիր ցանկութիւն, որ յամենայն  
կարօտուիս հոգւոյ և մարմնոյ դառ-  
նայ առ Վճ և ակնունի ընդունիլ ՚ի  
հմանէ զխրատ, դառաջնորդութիւն  
և զօգնութիւն Վ. յպէս եզիտ դա-  
ւիթ զնշան հաւատոյ իւրոց Վճ երբ  
անձն հորա ծարաւեցաւ առ Վճ որ-  
պէս երկիր անջրտի (Սող. ճիսք. 6:  
Խմ. 3:), Սոյն ինքն փրկիչն ասէ. ե-  
րանի որք քաղցեալ և ծարաւի իցեն

արդարու թեան. և խոստանայ նոցա,  
 թէ նոքա յազեցին (Մատթ. Ե. 6.) :  
 Օգացումն քաղցրութեան Տեառն  
 (Մաղծ. Լգ. 9.) ոչ լինի յամենայն  
 ժամանակի և պահու միատեսակ, և  
 չէ պարտ իսկ, և ոչ կարէ լինել այն-  
 պէս ցորչափ եմք յերկրի աստ Օյս  
 փորձեցին և ամենայն սուրբք, որք  
 նախ քան զմեզ էին : Բանի փոփո-  
 խութիւնք խնդութեան և տրամու-  
 թեան, երկիւղի և վստահութեան,  
 երկչոտութեան և բերկրութեան,  
 երևին յերգեցողութիւնս մովսիսի և  
 դաւթի : Վսլ այս իսկ եղև նոցա  
 պատճառ՝ մեծաւ ջանի՛ւ պատերազ-  
 միլ և մարտնչիլ առաջի աստուծոյ  
 յաղօթս, որք լի էին կատարեալ հա-  
 ւատքով : Վս յու օրհնակաւ, հասե ՚ի  
 միջի մեծամեծ տկարութեանց և պա-  
 կասութեանց իւրեանց, որք ճշգիւն  
 զգացողութիւնս նոցա՝ գտին նոքա  
 փորձի՛ւ (զոր մեք ՚ի հոյնօրինակ պա-  
 տահմունս կարեմք ունիլ և պարտիմք)  
 զմիսիթարիչ հաւատս թէ նա պարգևէ  
 վաստակելոց զամբուութիւն և տկարաց



զղօրու[թիւնս Վրանջի և տկարք սլար-  
տին զօրանալ տերամբ, և կարօղ լի-  
նիլ յամենայնի Հիսուսիւ Վրիսատ-  
սիւ, որ զօրացուցանէ զնոստ. զի որ-  
չափ աւետիքն աստուծոյ՝ էն ՚ի նմա  
այնն և ամէնն (Ա՛՛է՛՛ ՚՛. 20: ՓԷԼ  
՚՛. 15: Բ. Կրճ. Կրճ. Կրճ. Կրճ. 20):

### ԳՎ ՈՒՎՈ ԺԳ.

Օ՛ւրբ որդիտ աստուծոյ պահէն զպար-  
տեւանն աստուծոյ էւրեանց, և որպէս  
ընդ սիւրբն աստուծոյ իսպախէն  
զնէր աստուծոյն Վրանջի գործի և  
Բարտի կենցաղաւարտն. Էն պարտի  
հաստոյ, որ Տարե զսիւրբ Տարեկայն  
և ասնէ ընդունանէ՝ աստուծոյն և  
տրիսպանէն աստուծոյն:

Ա՛յ որ ՚ի նոցանէ, որք լայնէն  
յայդպիսի հաղորդու[թեան ընդ աս-  
տուծոյ, իբրև զբարեբարոյ որդի ընդ  
բարի հօր իւրում, հնազանդեսցի նմա  
անպատշաճ՝ եղանակաւ, կամ առ լար-  
ձասիրու[թեան, կամ ծառայական եր-

կիւղի՛ն և կամ բռնութեամբ. քան-  
 զի ոչ վասն այնք հնազանդի որդի  
 բարի. այլ նա ահայ նմա առ սիրոյ  
 և զոհունակութեան. վասն զի գլխէ,  
 թէ այդպիսի է կամք հօրն. բարւոյ.  
 և որովհետեւ ցանկայ, զի հայրս այս  
 խնդասցի ի որդի իւր. Եդեալ զան-  
 սահման ապուինութիւն. իւր 'ի հա՛  
 հնազանդի նմա յամենայն իրա առանց  
 ինչ դաշնադրութեանց և սրտմանաց  
 ուրեմն և յայնպիսի դիպուածս, երբ  
 ոչ հասու լինի պատճառաց հրամա-  
 նաց նորա և պատուիրանաց, կի՛ք երբ  
 կամք հօրն երկնաւորի՝ ոչ համա-  
 ձայնի բնդ կամաց. Գորա՛ Նա շա-  
 տացեալ է՝ գլխելով՝ թէ հայրն գը-  
 թած է 'ի վերոյ որդւոյ իւրոյ, և  
 թէ՛ լաւ քան զորդի իմանայ զայն, որ  
 պիտոյ է վասն ճշմարիտ երջանկուե՛  
 նորա. Արդիք հնազանդք կարեն լի-  
 նել միմիայն նորա, որոց սեպհական  
 կամք 'ի դէպ ժամանակի նուաճինս  
 հրաժարիլ 'ի սեպհական և ինքն-  
 հաճ կամաց և յանձնիլ միայն կա-  
 մացն ստուծոյ՝ է անտարակուսելի



նշան հողւոյն Քի (Սառ. Թ. 39  
 և 38.), որդէգրուածեան այ՛  
 և հաղորդակցութե երկնաւոր ժա-  
 ուանգութեան հորատ Քանդի յեր-  
 կինս հրեշտակք և ոգիք արդարոց  
 կատարելոյ ոչ զայլ ինչ առնեն, բայց  
 զկամս աստուծոյ (Սառ. Թ. 10. Եւ-  
 ղոյ. Ժ. 22. 23.) Յորժամ դու հա-  
 ւատաս, [Ժէ ամենայն, որ պատահի  
 ընդ քեզ՝ լինի ըստ կամաց և սահ-  
 մանադրութեանն աստուծոյ, ՚ի հոյն  
 ժամու իսկ ես հաւատի, [Ժէ ամե-  
 նայն դառնայ յօգուտ քո՝ [Ժէ պէտ և  
 այն, ըստ սեպհական զգացմանց քոյ՝  
 այլ ազգ երևի քեզ. յոյն ժամ ՚ի միջի  
 ամենայն փորձանաց և չարչարանաց՝  
 այսր կենաց, նաև ՚ի միջ մահու իսկ  
 կարես լինել ՚ի կատարեալ հանդս-  
 տութեան և մխիթարութեան (Սա-  
 ռ. Ժ. 52.): ( )ըհնեալ է աստ-  
 ոած վասն ամենայնի. ասաց մի ՚ի  
 քարեպաշտ վարդապետաց եկեղեցւոյ  
 ՚ի միջի ամենածանր ձախորդութեան  
 կենաց. և ասաց զայս ճշմարտապէս  
 Քանդի գիտեմք՝ ե[Ժէ որոց սիրեն

զաստուած՝ յամենայնի, յամենախիտ  
 վիշտս իսկ՝ գործակից լինի՛ ՚ի բա-  
 րիս (Չորթ. Ը. 23. Գարծ. ԺԳ. 22:  
 Աբր. ԺԲ. 1—15):

Արարդէն իսկ կենդանանայ յայտմ  
 աշխարհի որդիական և երկնային  
 ոգւով, գորմէ խօսին մեղ սուրբ գիր-  
 քըն յիւրաքանչիւր [Ժերթի իւրում:  
 նա ոչ զմի պատուիրանն ինչ հօրն իւ-  
 րոյ երկնաւորի համարի ինքեան ծա-  
 նըր. նա ոչ ցանկայ, որպէս զամբա-  
 րիշտ, զի ոչ լինէին օրէնք ինչ յաս-  
 տուծոյ՝ այլ հանգոյն դաւթի, որ յօդ-  
 ուօրէն և ազդու իմն վկայէ այսմ ան-  
 ուամբ ամենայն բարեպաշտից՝ գտա-  
 նէ զբերկրու[թիւն, զցնծու[թիւն զա-  
 մենամեծ վայելչու[թիւն և զերջան-  
 կու[թիւն իւր ՚ի կատարման օրինացն  
 աստուծոյ իւրոյ (Ադմ. ՃԺ. 5. 6. 57:  
 70. 72. 77): Այս է սէրն աստու-  
 ծոյ, իմ, այնու իմանի, [Ժէ մեք սիրեմք  
 զաստուած, ե[Ժէ զպատուիրանս նո-  
 րա պահեմք. և պատուիրանք նորա  
 չեն ինչ ծանունք (Ամ. ՅԺ. Ե. 3):  
 Բանզի վասն երախտագէտ սիրոյ



ջիք ինչ ծառնր. սէրս այս ո՛չ վաստա-  
 կի, ո՛չ երկնչի ՚ի ձգնուլթեանց: Ար-  
 դիք աստուծոյ չունին զձշգրիտ նշան  
 ինչ որդէգրուլթեան, բաց յայսմանէ,  
 թէ նոքա հոգւոյն ւնի վարին սիրով  
 առ ամենայն բարիս (Նառ. Ե. 14.  
 15.), կամ, թէ ՚ի սիրոյ առ աստ-  
 ուած և առ փրկիչ իւրեանց ատեն  
 զչար և երթան զհետ բարեաց (Նա-  
 ռ. Ժ. 9: Սաղ. զզ. 10: Լ. Տ. Ե.  
 14. 15.): Ասն այսր իսկ ասա-  
 ցաւ. թէ Լրումն օրինաց սէր է.  
 (Նառ. Ժ. 10.) ուստի ՚ի հին կը-  
 տակարանի, մովսէս և մարգարէք,  
 որպէս ՚ի Նորն, առաքեալք, զպատ-  
 ուիրանն. սիրեսցես զՏէր աստուած  
 քո յամենայն սրտէ քումմէ, և յամե-  
 նայն անձնէ քումմէ և յամենայն մը-  
 տաց քոց, ձանաչեն և համարին մեծ.  
 վասն զի ՚ի նմանէ պարտի ծագիլ  
 պահպանուլթի այլ ամենայն առանձին  
 հրամանաց, որ հաճոյ իյէ աստուծոյ  
 (Ք. ( ) Ե. 5: Սաղ. Ե. 36—40.):  
 Օղբ ընդ այնմ սերտ լծորդեալ է  
 պատուիրանն. սիրեալ զընկեր քո իբ-

րև զանձն քո. (Ղ Լա. ԺԺ. 13.):  
 Լ.յսր աղագաւ և Քրիստոս զուգա-  
 ւորեաց զերկու պատուիրանս զայսոսիկ  
 'ի մի. քանզի մին առանց միւսոյ Լի-  
 նել ո՛չ կարէ: Եթէ որ ասիցէ՝ եթէ  
 սիրեմ զաստուած, և զեղբայր իւր  
 ատիցէ՝ սուտ է. քանզի որ ո՛չ սիրէ  
 զեղբայր իւր, զոր տեսանէ. զաստ-  
 ուած, զոր ո՛չն ետես՝ զիմօրդ կա-  
 րիցէ սիրել (ձ. ՅՎ. Դ. 20.):

Կամք աստուծոյ են. զի մեք ընդ  
 մերձաւորաց մերոց եղևցուք 'ի նոյն-  
 պիսի կապակցութեան, յորպիսի են  
 որդիք 'ի տան հօր իւրեանց: Ըրդ  
 որդիք բարիք, որք սիրեն զբարի  
 հայր իւրեանց. զիմօրդ կարիցեն ա-  
 տել զմիմեանս և թշնամանեալ զի-  
 րեարս (ձ. ՅՎ. Դ. 20. 21:  
 Բ. 1.):

Ամն 'ի հին հեղինակաց քրիստոնէ-  
 ից պատմէ ըստ սրբոյ առաքելոյն յով-  
 հանուս, թէ սա բազմիցս 'ի Ժողո-  
 վըս Քրիստոնէից, յորս տանէին 'ի  
 խորին ծերութեան նորա՝ ասէր մի-  
 աջն զայս. սիրելի որդեակք, սիրե-



ցէ բ զմիմեանս: Ամանք զարմանայ-  
 ին ընդ այն. և երբ հարցանէին ցնա  
 թէ ընդէ՞ր ասէր նա միայն զայն  
 բան, պատասխանէր. վասն զի այն է  
 պատուականն աստուծոյ. և յորժամ  
 կատարի այն, բաւական է յոյժ: Ա՛ճ  
 կարի իսկ յիրաւունս. բանդի իմա-  
 ցաւ նա աստանօր զնոր պատուիրան  
 զայն, որ 'ի տեառնէ և 'ի փրկ-  
 չէն մերմէ տուեալ էր այնոցիկ ուրք  
 ճշմարտապէս պաշտեն զնա, զի սի-  
 րեսցեն զմիմեանս, որպէս և նա սի-  
 րեաց զնոսս և եցոյց շտէր իւր՝ ե-  
 դեալ զանձն իւր վասն նոցա (Յճ. 34: ԺԵ. 12, 13): Ա՛ճ արդ՝  
 պատուիրանս այս պահանջէ, զի ըզ-  
 զայմամբ սիրոյ նորա բորբոքեալ  
 սիրտ մեր ստիպեսցէ զմեզ (Թ. Աճ. 14: Յճ. 15—17), սիրել  
 զեղբարս այնպէս, զի և մեք պատրաստ  
 եղիցուք վասն նոցա դնել զանձնս  
 մեր (մ. Յճ. 16): Այս, որ եդն  
 վասն մեր զկեանս իւր՝ կամի զի մեք  
 փոխադարձ սիրեսցուք զնա 'ի փոք-  
 րագոյնս յեղբարց իւրոց և մերոց

(Մատթ. Իե. 34.): Ար զայս պահէ,  
այն ոչ ունի պէտս յառանձին յորդո-  
րանս ինչ առ ՚ի կատարել զայլ մաս-  
նաւոր պատուիրանս Տեառնս Արոյ  
աղաղաւ և պարտէ մեզ ջանալ պա-  
հել զմիաբանութիւն հոգւոյն յօգիւ  
խաղաղութեան (Ագե. Գ. 2. 3. ևն):  
Յայսմ դիտասցեն ամենեքեան, ու-  
րեմն և մեք իսկ, թէ աշակերտք չոր-  
ա եմք, թէ սիրեցուք զմիմեանս  
(Յով. ԺԳ. 35.): Ըն հասարակ ա-  
մենայն գործք մեր ունին յաչս նորա  
զգին, ուրեմն և կարեն արժանի լի-  
նել վարձուց յայնժամ միայն, յորժամ  
ճշմարիտ սէր առնա առաջնորդ լի-  
նի մեզ յայնմ, և յորժամ զամենայն,  
զոր նա հրամայեալ է մեզ, կատա-  
րեմք. և զամենայն, որ արդէլեալ է  
առ ՚ի նմանէ, թողումք վասն այնր և  
էթ, զի այսպէս է կամք չորաւ Վլուխ  
պատուիրանին սէր է ՚ի սուրբ սրտէ,  
և ՚ի մտաց բարեաց և յանկեղծ հա-  
ւատոց (մ. Տեճ. Թ. 5.) վրկութիւն  
մեր է ՚ի թողութեան մեզաց մերոց  
(Ագե. Թ. 77.) և որ խոստովանի



յայնմ, [Ժէ [Ժողեալ Լիւնին մեղք  
 իւր բաղումք՝ նա շատ սիրէ զնա,  
 որ շատ է [Ժող նմա (Ա. Գ. Կ. 47.):  
 Քանզի՛ զիմքդ կարասցէ նա Լի-  
 նել այնչափ ապերախտ և մոռանալ  
 զամենայն տուրս տեառն, որ քաւէ  
 զամենայն մեղս նորա, և բժշկէ զամբ  
 հիւանդու [Ժիւնս նորա (Ա. Գ. Ը. 23.):  
 Եւ ընդպէս մեք ոչ սիրեցուք  
 զնա, որ նախ ինքն սիրեաց զմեզ (Ա.  
 Գ. Կ. 19: Եւ 2.): Հաւատն  
 առնէ զմեզ աշակերտս Քրիստոսի,  
 իսկ սէրն է պատճառ և ապացուցուի  
 մեր, [Ժէ դասեցոք ընդ աշակերտս  
 նորա: Քանզի սէր առ նա ունի զիւր  
 հիմն յարդարու [Ժեան, ինչ, ՚ի գտեալ  
 [Ժողու [Ժեան մեղաց մերոց ՚ի ձեռն  
 հաւատոց, յորում եմք հաւաստի ընդ  
 անկեղծ սիրոյ առ աճ և առ որդին  
 մի Եւ Քն դիւբաւ ընդդէմ բաղ-  
 միցս յիշեալն ՚ի սք գիրս. փրկաւտ  
 երկիւզ մի, ինչ, երկիւզ որդիական, որ  
 օժանդակէ սիրոյ և չէ խորդ ոչ միում  
 յորդոց աստուծոյ (Ա. Գ. Ը. 161.  
 120.):

Օ այն ամենայն, որ լինի անկեղծ սիրով և յօժար հնազանդութեամբ առ աստուած և առ Յիսուս Քրիստոս, անուանեն սուրբ զիրք բարի գործք կամ, որ հոյն է ասել, բարեպաշտ գործողութիւնք: Օ այնցանէ խօսի և սուրբ առաքեալն յակովբոս յերկրորդ գլուխ թղթոյն իւրոյ Մ. 1-նորիկ յոյժ զանազանին ՚ի գործոց օրինաց, որովք այնորիկ որ զանձնա իւրեանց ինքեանք արդարացուցանեն, կամին արժանանալ վարձատրութեն յաստուծոյ (Աբե. ք. 8—10: Առդ. 10: 10: Հռ. 7: 7: Տե՛ճ. 7. 18: Տե՛ս. ք. 14: Ս. 10. 10.): Մ. 1-նորիկ ծնանին և եթ յայնցանէ որք ունին զճշմարիտ հաւատս: Քանզի այնորիկ են անհրաժեշտ և անշուշտ հեռեանք հաւատոց, գործք աստուծով, ինչ, անդադար մտադրութեամբ առ աստուած, արարեալք (Յ. 21. 21.): ուրեմն և համեմատ վերոյիշել (Աբե. 10. 10.) պտղոց հողոյն, որովք և նոր միտք հողոն սրբով, ՚ի ձեռն հաւատոցն Յիսուս Քրիստոս ներ-



գործեալ և ծաշեալ 'ի մեզ այնչափ  
 ևս հաւատեալու ճանաչին, որպէս  
 ծառ բարի ճանաչի 'ի բարի պլտ-  
 զոյ (Մատթ. է. 20, Մթ. 33), Աստու  
 որոյ և անուանին այնքիկ նմանապէս  
 պտուղք արդարութեան, արտադ-  
 րեալք Հիսուսի՛ն Քրիստոսի՛ն, ո՛չ  
 'ի փառս իւր, այլ 'ի փառս և 'ի  
 գովեստ աստուծոյ, որ է պատճառ այ-  
 նոցիկ (Փիլ. Թ. Է.)։ Աիրտ մարդոյ՝  
 որ նախ քան զդառնալն, Լցեալ էր  
 պղծութեամբ՝ մաքրի, որպէս ասէ  
 սուրբ առաքեալն պողոս, (Ղազճ. Մե.  
 9.) հաւատովք այնպէս, զի Լինի  
 հաճոյ աստուծոյ և պատրաստ 'ի բա-  
 րի գործս։ Բանգի միայն սրբութիւն  
 խղճի մտաց մերոց 'ի մեռելոտի գոր-  
 ծոց, իմ, 'ի մեղաց, Լինիմք մեք ար-  
 ժանի պաշտել զաստուած կենդանի.  
 'ի ձեռն այնր և եթ կոչիմք մեք 'ի  
 մասն վիճակի որբոցն 'ի լոյս, և փո-  
 խիմք յարքայութիւն որդւոյ աստու-  
 ծոյ սիրելւոյ (Աքե. Մ. 14, Արդ. Թ.  
 12, 13.) և յայնժամ և եթ փառա  
 ւորեսցի հայր տեառն մերոյ Հի Քրի

յորժամ պտուղ յոյժ բերցուք, և  
այնուիկ ցուցցուք, [Ժէ մեք եմք ա-  
շակերտք Քրիստոսի (Յճ. ԺԵ. 8:  
ՆԷր. ԺԴ. 21.) վասն որոյ և պատ-  
ուեաց ինքն փրկիչն զեկեղեցի իւր  
'ի ձեռն միոյ 'ի ճշմարիտ հեռեւողաց  
իւրոց, այսու վկայութեամբ. տեսի  
զգործս քո, շտէր և զհաւատ և ըզ-  
պաշտօն քո զհամբերութի՛ն՝ զի բա-  
ղում է վաստակ քո վերջինն քան  
զառաջինն. (Յայտն. Թ. 19.):

Արանեալ է նա, որ սեպհական փոր-  
ձիւ իւրով յայնմ ամենայնի հաւաս-  
տի է: Նա յայնժամ և եթ հասու  
լինի կատարելապէս առաքելական  
բարի (մ. Յճ. մ. 7.). եթէ ընդ  
լոյս գնայցեմք՝ որպէս և նա 'ի լոյս  
է, զհաղորդութիւն ունիմք (մեք հա-  
ւատացեալքս 'ի նա) ընդ միմեանս.  
և սուրբ և երանելի է հաղորդութիւն,  
զոր մեք (Գոտն. 5.) ունիմք ընդ հօր  
և ընդ որդւոյ նորա Յիսուսի Քրի.  
և արիւնն Յիսուսի Քրիստոսի որդ-  
ւոյ նորա, սրբէ զմեզ յամենայն մե-  
զաց: Արանեալ է նա ամենեքեան, որք



'ի ձեռնս այնք զտանենս սիրտ սուրբ  
 (տէո. Սողմ. Ծ. 4: Աբբ. Թ. 14: Թ. 3.): զի հոքա զաստուած  
 տեսցեն (Սառ. Ե. 8: Սողմ. հք. 1.): Լուանց սրբութեանն ոչ որ տես-  
 ցէ զաստուած (Աբբ. Ժք. 14.): Աս  
 որոյ և պարտ է մեզ ունիլ զսրբութի,  
 պարտիմք սրբիլ զանձինսս յամենայն  
 պղծութենէ մարմնոյ և հոգւոյ, և  
 կատարել զսրբութիւնն ասիւնս աս-  
 տուծոյ (ք. Արշն. Ե. 1: Թ. 3.): Լու միայն սիրտ հաշտեալ ընդ  
 աստուծոյ 'ի ձեռնս Յիսուսի Քրիստո-  
 սի. որ աղատէ 'ի չար մտաց, հասցէ  
 ձշմարիտ սրբութեանն որ հաճոյ է  
 համար (Աբբ. Ժ. 22: Արշ. Թ. 9—14:  
 Յոյո. Թ. 5.):

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Փրկուէք հասար 'ի Յիսուս Քրիս-  
 տոս ոչ թէ միայն լալապէս զի 'ի հա-  
 րաբելոյ զսոսոսածային օրէնս, այլ ընդ  
 հալապէն հասարաւ զպարտաւորու-  
 թիւնս յայնձ և որոյ թիւ զլուրուսիւնս և

ԿԸՆԳՈՒՆԻՄԻՆՆԻՆ Ի ԷՄՄԵՐԵԼ ԸԿ-  
ՆՈՒԲՆԷ:

Իսկ արդ՝ զօրե՞նս ինչ խափա-  
նեմք հաւատովք՝ այնպէս, զի կա-  
րասցուք զանց առնել զպատուիրանօք  
և հաստատել թէ երբ հաւատամք,  
յայնժամ ներելի է մեզ քակտել զօ-  
րե՛նս, կամ գոնէ այսպիսի քակտումն  
չէ՛ այնչափ մեղադրելի ի Քնու և իցի-  
այլ զօրե՛նսն այնու առաւել ևս հաս-  
տատեմք. մեք ամբացուցանեմք զայն  
և տամք այնմ զանթերի զօրութիւնս  
վարդապետութեամբ մերով, որ վասն  
հաւատոց (Հոսի. 7. 31.). բանզի ոչ  
հրամանք և կամ արգելմունք օրինաց  
ընդ ի՛քեանց, և ոչ լծորդեալք իսկ  
ընդ այնմ խոստմունք և սպառնալիք  
որք հիմնեալ են ՚ի կատարման կամ  
՚ի զանցառութեան նոցին, այլ հա-  
ւատքն ընծայէ մեզ զկեանս (Պատմ. 7.  
21; Հոսի. 2. lix), ցի, զբարե-  
յօժարութիւն և զգօրութիւն կա-  
տարել զկամս աստուծոյ, որք յայանի  
են մեզ յօրինաց անտիս Ա՛՛՛ զիմարդ



կարբէլի էր խկ, զի ոք կարողանայք  
 դնել շապաւիւնու [Ժիւն] խւր 'ի [Ժո-  
 ղու [Ժեան մեղաց ցայն վայր, մինչև  
 տակաւին ծառայեցէ մեղաց: Սեղ  
 ցանկացողացս լինել Քրիստոսեանք,  
 երևեցաւ շնորհքն աստուծոյ փրկիչ  
 'ի Քրիստոս, որ խրատէ զմեզ զի  
 ուրացուք զամբարշտու [Ժիւն] և զաշ-  
 խարհական ցանկու [Ժիւն], և զգաս-  
 տու [Ժեամբ] և արդարու [Ժեամբ] և  
 աստուածպաշտու [Ժք] կեցցուք յաշ-  
 խարհիս: Քանզի Քրիստոս ետ  
 զանձն իւր վասն մեր, զի փրկեցէ  
 զմեզ յամենայն անօրէնու [Ժեան], և  
 սրբեցէ իւր Ժողովուրդ սեպհական  
 նախանձաւոր գործոց բարու [Ժեան]:  
 Արք մեռաք մեղացն. զիմօրդ տակա-  
 վին 'ի նմին կեցցուք. (Տէր. ք. 11.  
 12. 14: Թ. Արք. ք. 9. 11. 12: Նշ-  
 ար. 7. 1—14):

Քանզի ամենայն, որ յաստուծոյ է  
 ծնեալ՝ մեղս ոչ առնէ. ամենայն,  
 որ ոչ առնէ դարդարու [Ժիւն], չի՛ նա  
 յաստուծոյ (Թ. Նշ. 7. 9: 10: Թ. Թ.  
 Թ. Արք. Թ. 14. 15: 7. 3: Փիլ. ք. Թ.

15.)։ Քրիստոս է յաղթօղ, այլ ո՛չ ծառայօղ մեղաց։ Աս վասն ամենեցուն մեռաւ, զի որք կենդանիք իցեն մի առձանց իցեն կենդանիք (ըստ ցանկութեանց մեղաց իւրեանց և կրից), այլ ՚ի կամս և ՚ի փառս այնր, որ ՚ի վր իւրեանց մեռաւ և յարեաւ (ք. Առն. Է. 14. 15)։ Ապաքէն, որ Քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին՝ կարեօքն և ցանկութեամբք հանգերձ (Պաղ. Է. 24։ առ. Հար. 7. 6)։ Սահմանամբն զոր նա կրեաց վասն մեր յօժարակամ մեք ո՛չ միայն պարտական լինիմք այլ և զզօրութիւն զտանեմք կամաւ ծառայել նմա և կեալ բնա՛նն վասն նորա։ Աշխարհաւ և կենդանի հաւատովք ՚ի Յիսուս Քրիստոս, մեք ամենեքեան եմք որդիք ան. (Պաղատ. 7. 26.), որով ՚ի նմանէ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, շնորհեալ է մեզ ամենայն ինչ աստուածեղեն զօրութեան նորա առ ՚ի կեանս և յաստուածպաշտուի. ք. Պիտ. ան. 3.)։

Ա՛յլ արդ՝ ոգի նորոյ կտակարանի,



զոր կատարեաց ամ ՚ի ձեռնն Յի Կրի  
 ընդ մեզ, և ոգի սրտի, ոգի որդեգ-  
 րու թեան, ոգի իշխօղ (Աղճ. ճ.  
 14: Արեճ. Լ. 21: Հոգի: Ը. 5.),  
 այնպէս, զի միաւորեալ մեր ընդ այժմ  
 ոչ գտանիմք մեք ևս ՚ի ներքոյ ծանր  
 ծառայութեան արտաքին օրինաց և  
 սպառնալեաց. քանզի չունիմք ևս յայնս  
 զպէտս ինչ: Ընդ հակառակն ինքն  
 Տէր ասյ զօրէնս ՚ի միտս մեր և գը-  
 րէ զնոսս ՚ի սիրտս մեր և առնէ ըզ-  
 մեզ այնպէս, զի երթիցուք ըստ ճա-  
 նսպարհաց և ըստ պատուիրանաց  
 նորա. և ՚ի ձեռնն այսր իմանամք մեք  
 թէ նա է աստուած մեր, և մեք ժո-  
 դուութիւն նորա (Արեճ. Լմ. 33. 34:  
 Աբբ. Ը. 10: Ժ. 16—18: Պատմ. Դ.  
 3—6: Ե. 18: Թ. ՏԷճ. Թ. 8: 9):  
 Սուրբ առաքեալն պօղոս ասէ հաւա-  
 տացելոց (Հոգի: Դ. 14.). մեզք ձեզ  
 ոչ տիրեցեան. քանզի ոչ էք ընդ օ-  
 րինօք, այլ ընդ շնորհօք: Աթէ որ  
 զոչինչ աւելի գիտէ և խոստովանի,  
 բայց միայն զայն, թէ նա պարտական  
 է հնազանդիլ օրինաց, կամ, եթէ

նա պատրաստ է պատերազմի և մար-  
 ան չի Լ ընդ մեղաց, միայն վն երկխղի  
 պատժոյ, զոր ծնաւ 'ի նմա օրէնքն.  
 նա տակաւին է ընդ օրինօք, Բ. Ե. 11  
 ճանաչմամբ յիշեալ պարտաորու թե  
 իւրոյ և ոչ վերոգրեալ երկխղի  
 կարէ նա յաղթել և մերժել զմեղս.  
 Վա նաև փորձէ յառն իւր, թէ բնու-  
 կան հակամտութիւն առ մեղս, որ  
 է 'ի նմա, բազմիցս պատուիրանօքն  
 իսկ առնու պատճառս. գործել 'ի  
 նա զամենայն չար ցանկութիւնս  
 (Հորձ. Է. 7. 8. 24.): Բ. Ե. 11 որ ստի-  
 պի զգայորութեամբ սեպհական տը-  
 կարութեան իւրոյ և անգօրութեան,  
 դառնայ առ Քրիստոս, հաւատայ 'ի  
 նաև վասն արդեանց նորա դնէ զա-  
 պաւինութիւն իւր 'ի շնորհս աստու-  
 ծոյ. նա չի ևս ընդ օրինօք, այլ ընդ  
 շնորհօք: Սա արգելու նմա մեղան-  
 չել. (Հորձ. Դ. 15—23.) այլ ընդ  
 հակառակն, 'ի ձեռն նորին գտանէ  
 նա զազատութիւն յիշխանութե-  
 նէ մեղաց և զգօրութիւն կատարել  
 զօրէնս աստուծոյ առանց երկխղի և



բունադատութիւն (Պատմ. 72—75, Պատմ. 25, Մատթ. 4. 11). Միով բանիւ յայտնում և եթ, երբ որդիւն աստուծոյ ազատեաց զնա 'ի մեղաց, ճշմարիտ ազատ է (Պատմ. 36, Գործք. 13. 8. 9.) :

Այլ արդ՝ 'ի ձեռն հաւատոց 'ի փրկիչ մեր, լինիմք մեք հաղորդակիցք երկուց գլխաւոր բարեաց փրկկագործութեան, ինչ, նախ՝ արդարութեան, այն է հաշտման ընդ աստուծոյ, և ասպ սրբութիւն, կամ, որ նոյն է ասել թողութեան մեղաց և տիրապետութեան 'ի վերայ մեզաց (Ագ. 10. 14.) : Բանզի 'ի նմա միայնում ունիմք մեք զարդարութիւն և զգործութիւն. նախ զարդարութիւն զի ազատ եղիցուք յամենայն պատժոյ վասն մեղաց, որում արժանացաք իսկ զգործութիւն զի յաղթեսցուք մեղաց և առատութեամբ բերիցուք ըգպտուղս բարիս (Ագ. 1. 24, Փիլ. 2. 13, Ագ. 10.) : Իսկ որք ոչ կամին ասպշխարհելն ոչ կամին տիրել 'ի վերայ մեղաց, կամ դիմել առ

Ճշմարիտ սրբութիւն. նորա ջանան  
 Ընդունիլ զԹողութիւն արարեալ մե-  
 ղաց առ այն, զի մնասցեն տակաւին  
 Ընկզմեալ և Թաղեալ 'ի մեղս, և  
 գործեսցեն զմեղս առանց երկիւղի  
 ինչ պատժոյ:

ԳՎՈՍԻՍ ԺԵ.

Արջան! ուրիշն, որ Էշիտի 'ի Ռոմոսոս-  
 Ընեէ և հաղորդութեան ընդ Յիսուսի  
 Երոս ընդ մեհահասարեի՞ Բարեհմի  
 Երասարոտի, վարդապետի և Ռիսորտի  
 Ռերոս:

Ա՛լ արդ՝ եթէ մեք հաւատամք 'ի  
 Յիսուս Քրիստոս, այ՞ ուրիշք մեք  
 'ի նմա և այժմ՝ իսկ զայնպիսի բարե-  
 կամ հաւատարիմ, որպիսի էրն յառա-  
 ջագոյնս վասն մերձաւորաց իւրոց,  
 յորժամ նա էր յաշխարհի աստ  
 Քանզի նա ինքն ուխտեաց լինել  
 Ընդ մեզ զամենայն աւուրս, մինչև 'ի  
 կատարած աշխարհի (Սաւ. իւր. 20):  
 Աս, մարդն Յիսուս Քրիստոս



որ մատոյց զանձն պատարագ վասն  
 փրկու. [Թեան ամենեցուն (մ. ՏԻՏ. ք.  
 56.) և այժմ իսկ է ողորմած և հա-  
 ւատարիմ քահանայապետ (ԱԷԸ. ք.  
 17: ք. 15.), զոր ունիմք բարեխօս  
 առ հայր (մ. ՅՊՆ. ք. 1.), Նա է լի  
 աջմէ աստուծոյ և բարեխօս իսկ է  
 վասն մեր (ՆՊՆ. ք. 34: ԱԷԸ. ք.  
 25.): Նանգոյն այնմ, որպէս նա ՚ի  
 վերայ խաչափայտին ոչ [է միայն  
 աղօթեաց վն չարագործաց, և խոս-  
 տացաւ ասպշխարօղ աւազակին ողոր-  
 միլ, այլ և մեծաւ սիրով հոգայր վն  
 մերձաւոր բարեկամաց իւրոց (ՅՊՆ.  
 ԺԺ. 25.) և որպէս սիրեաց զիւրն,  
 որք յաշխարհի աստ էն, մինչև իս-  
 պառ (ՅՊՆ. ԺՊ. 1.) և ոյնպէս իսկ  
 հաստատեաց և եցոյց նա յետ յարու-  
 թեան և համբարձման իւրոյ, [է  
 նա է ոյնն, որ նախ էրն, երեկ՝ և  
 այսօր. ոյն և յաւիտեան (ԱԷԸ. ԺՊ.  
 8.): Սա վասն յաւիտեան կալոյ՝ ա-  
 ռանց արցանեւոյ ունի զքահանայ-  
 ու. [Թիւնն. ուստի և կենդանի առնեւ  
 համօրէն կարօղ է զմատուցեալն

նովաւ առ աստուած (Աբր. 25. 24. 25.):

Ար ունի զհաշորդութիւն ընդ Յի-  
 րիստոսի, ունի նմանապէս և զհա-  
 ղորդութիւն ընդ հօր (ա. Յով. 3. 7: Յով. 4. 21—23): և որ սի-  
 րէ զնա, սիրեցեալ է նա նմանապէս  
 'ի հօրէ: Օայդպիսին ընդունին հո-  
 քա երկոքեանն, հայր և որդի 'ի հօ-  
 վանաւորութիւն իւրեանց և յառան-  
 ձին իմն առաջնորդութիւն. և մերձ-  
 են հմա, որպէս մերձ է բարեկամ  
 իւրում բարեկամի (Յով. 4. 21-  
 23: Բ. Աբր. 7. 16: Յայ. 7. 20:  
 Ա. 8. 15.): Սիրապատար եղա-  
 նակ վարելոյն Յիսուսի ընդ մարի-  
 ամայ և մարթայի, հոգացողութիւն  
 հորա վասն մարիամայ մօր իւրոյ ե-  
 ռանելոյն 'ի ժամանակի խաչելուն,  
 եղանակ վարելոյն ընդ սիրելի աշա-  
 կերտին իւրոյ, ընդ մարիամայ մագ-  
 թաղինացւոյ և ընդ աշակերտաց որք  
 երթային յեմմաւոս, են օրինակք վճ-  
 մեր, որք մինչև ցայսօր ևս մտիթա-  
 րին և ուսուցանեն զմեզ, որք կարեմք



ընդ պետրոսի ասել՝ Տէր, դու զամենայն գիտես. և դու իսկ զամենայն ճանաչես, և եթէ սիրեմք զքեզ (Հով. Իա. 17.): Արչափ որդիական և արկեղծ սիրով վարիս դու ընդ նմա աներևոյթ բարեկամի քում (Թ. Պե. Թ. 8: Թ. Թ. 27.) և արկանես առաջի նորա զամենայն հոգևոր ներքին և արտաքին պակասութիւն և կարօտութիւնս քո, զցանկութիւնս և զաղօթս, առանց երկիւղի տարակուսանաց և երկբայութեան այնչափ առաւել հաճոյ եղիցիս նմա (Թ. Թ. 17. 18: Հով. Թ. 7.): և երբէք ոչ ելցես դու ՚ի նմանէ առանց խորատու, վարդապետութեան և մխիթարութեան Վանդի զրկմամբ երեւիլի ներկայութեամբ նորա, ոչ կորուսանես նորա, որք նորայն էս, ոչ զմխիթարութիւն, ոչ խորատու և ոչ զօրհնութիւնս (Հով. Թ. 7.): որպէս փորձեցին յանձնիս իւրեանց առաջին աշակերտք նորա, անպատում ուրախութեամբ իւրեանց, զկրի համբարձման նորա: Երդարև՝ չիք ինչ այն-

չափ փոքրիկ և անարգ, որոյ վասն  
 ոչ պարտ և արժան լինէր դառնալ  
 մտօր և աղօթիւք առ ճա: Վիւրաւ  
 քան զամենայն կարեմք մեք սխալել  
 յայնպիսի գործս որ ոչ ինչ երեւին,  
 կամ թեթեւ, թէ և նոքին լինին վը-  
 սեմ և կարեօր և բերեն զկնի իւր-  
 եանց զմեծամեծ հետեանս. վասն զի  
 մեք կարի առաւել ձեռնամուխ լի-  
 նիմք յայդպիսի դիպուածս, յուսալով  
 յուշիմութիւն անձին և ՚ի սեպհա-  
 կան զօրութիւնս, քան յայնպիսի գոր-  
 ծըս, զոր մեք համարիմք վսէմս և  
 մեծամեծս:

Մտաբեր գիտեմ ես, թէ զգացո-  
 շութիւն մեղանչական թշուառութե  
 իմոյ, ճնայ յիս և զկնի ժամանելոյ  
 ողորմութեան (զի մարմին ցանկայ  
 հակառակ հոգւոյ, նաև յայնոսիկ, որք  
 հոգւով երթան, և զցանկութիւն  
 մարմնոյ կատարել ոչ կամին. (Պատմ.  
 Ե. 16. 17): Այլ այսմ չէ պարտ  
 երբէք արգել լինիլ ինձ և երկու-  
 ցանել իսկ ընդ հակառակն պարտի  
 խրատութեւ զիս և զարթուցանել իսկ



առ այն զի խնդրեցիմ 'ի հմա մի ոյ-  
 հուամ զօգնու[թիւն և զձեռնտուութիւն  
 Մեծնայն երջանկու[թիւն մեր յերկրի  
 աստ է 'ի հաղորդու[թեան ընդ հմա,  
 և 'ի սերտ մերձեանալ 'ի նա (Կրճ. Կրճ.  
 7. 17.). նա պարտի լինել ծանրա-  
 զին առարկայ խոկմանց մերոց ոչ  
 ուրէք, բայց 'ի հմանէ, պարտ է մեզ  
 ակնունիլ և խնդրել զխաղաղու[թիւն  
 և զճշմարիտ երջանկու[թիւն որպէս  
 դաւիթ ասաց զանձնէ և հաստատեաց  
 զայն արդեմք յամ կեանս իւր. եկն ըզ-  
 կնի քո անձն իմ. զի [թէ յիշէի ըզ-  
 քեզ յանկողնի իմում. ընդ առաւօտս  
 կախեալ խօսէի ընդ քեզ (Սող. Կրճ.  
 6. 7. 9). Բանզի զո՞ սիրես  
 զնմանէ և մտածես. զնմանէ յաճախ  
 և կամաւ խօսիս Մ. ա այս հաղորդու-  
 [թիւն ընդ հմա. առ այս հպատակու-  
 [թիւն սրտի և մտաց, որ անդադար  
 ուղղեալ և դարձեալ է առ նա և ծա-  
 բաւի խրատու նորա, հրաւիրէ ինքն  
 փրկիչն զբարեկամս իւր, իբրու առ  
 ընտրու[թիւն մասին բարւոյ, որ ոչ  
 բարձցի 'ի նոցանէ (Ղ. 42.)

Բ. յղպիսի հանդամանք ոգւոյ օժանդակեան մեզ նաև առ այն, զի միշտ բարւոք և ճշմարտապէս իմաստցոք զամենիմաստ խորհուրդ նորա և ըզկամս. յայտոսիկ՝ ամենայն պատահարս, յորս պէտս ունիմք նորին մխիթարունէ, օգնութեան, և խրատուց (Գե. Սող. հր. 2 - 26.): Ալ ոչ յօժարակամ վարեցի ընդ նմա, յորոյ 'ի սէր է հաւաստի, և զոր սիրէ փոխադարձ: Մի թէ նա, որ ընդ ում և իցէ մարդոյ վարի յոյժ բարեկամութեամբ, ոչ գիտասցէ զկամս նորա և զմիտս աւելի փութով և ստուգապէս քան զայլն որ չէ յայնչափ սերտ կապակցուն է նմա: Բազմիցս հանրկ է միայն մտածել զընկերէ՝ առ գիտել ո՞րն ժամայն թէ զորպիսի խորհուրդս և կամս ունի նա վասն այսր, կամ վասն այնր գործոյ: Թէ որչափ Յիսուս Բրիտտոս հոգաց զայսմ հաղորդութեանէ մերմէ ընդ նմա և վասն անխղելի կապակցութեան հոգւոյ մերոյ է նմայս առաւելապէս երևի յառակէ նորա վասն որթոյ և ուռոյ (Յ. Ժ. Ժ. Ե.)



4—10), Մ.Յ.Ս. ՚ի ձեռնն այսր հաղորդու  
 թեանն և եթ ընդ նմա, հասա-  
 նեմք մեք յաստուծոյ (Փիլ. Դ. 7: Ս.Յ.Ս. Գ. 15.), գտանեմք զկա-  
 քողութիւնն ծառայել տեառն միշտ և  
 անդադար. ունիմք ՚ի նմա զձշմարիտ-  
 շահս, այնպէս, զի նա բնակի ՚ի մեզ  
 յամենայն ժամ. նաև ՚ի կատարել-  
 արտաքին պարտաւորութեանց կոչ-  
 ման մերոյ գտանիմք մեք ՚ի նմա  
 (Փիլ. Գ. 8. 9: Ս.Յ.Ս. Գ. 20.), և ՚ի  
 Լրութեանէ նորա ընդունիմք շնորհս  
 փոխանակ շնորհաց (Յով. Թ. 16.):  
 Իսկ ան որոյ և աղաղակէ նա առ մեզ  
 առանց իմ ձգինչ կարէք առնել ՚ի  
 առանց օգնականութեանն և գործակ-  
 ցութեանն իմոյ՝ պակասեցի ձեզ կա-  
 տարեալ կամք և շօքութիւն գործել  
 զբարիս. այլ նա որ հաստատեալ է  
 յիս, և ես ՚ի նմա, նա բերէ պառուղ  
 յոյժ. նա պատրաստեալ է ՚ի գործս  
 բարիս և զամենայն կարացէ ինն  
 (Փիլ. Դ. 13.): Հաւատացեալն գտա-  
 նէ ՚ի Քրիստոս ՚ի ձեռնն աղօթից

զամենայն զօրութիւնս, զոր ոչ գտա-  
 նէ յանձլին իւրում. զամենայն զօրու-  
 թիւնս ասեմ, որք հարկաւոր են նմա  
 ոչ միայն առ սրբութիւն իւր առ հա-  
 սարակ, այլև առ կատարել զմասնա-  
 ւոր քրիստոնէական առաքինութիւնս  
 քանզի բնակեցաւ Քրիստոս հաւա-  
 տով 'ի սիրտ նորա (Ագ. 17,  
 Առ. 9—14), Յուսկ յետոյ ասէ  
 Յիսուս յառակի իւրում. եթէ որ ոչ  
 է հաստատեալ յիս, ելցէ նա արտա-  
 քրս իբր զուռն, որ ոչ եբեր զպտուղ  
 և ցամաքեցի. նա զրկի յիրաւանց  
 ընտրելոց խնոց. նա մեռանի և թէ-  
 պէտ և պահեցէ յինէն զանուն քրիս-  
 տոնէի, իբրև զցամաքեալ և զ'ի բաց  
 ընկեցեալ ուռն յորթոյ, սակայն ես  
 ոչ գիտացից և ոչ համարեցից զնա  
 երբէք անդամ իմ:

ԳՒՈՒԽ. Ժ. Գ:

Աշուտ յանուն յիսուսի քրիստոսի՝ և զի-  
 սորք Լեւի Լեւի նորին: Ստործախցու-  
 թիւն հագոցն որքոյ. ըստ որում է



Վէպոսթիանն և առհասարակեաց յառեանե-  
 նանն Էրջանէոսթեանն Տերոյ: Արդո՛ր-  
 քոսթեանն որքոյ Էորհրդոյ առ զըրեմ-  
 ցանէլ և հասարակէլ զՏէլ 'ի հասարո-  
 'ի Էրէնէնն և 'ի որքո առ նա և առ  
 Տերջոսորո Տեր:

Աթէ որ գտանի յերջանիկ հաղոր-  
 դութեանս յայսմիկ ընդ աստուծոյ  
 նա զոր և առնիցէ բանիք և ար-  
 դեամբ, զամենայն առնէ յանուն Տ'ն  
 Յիսուսի Քրիստոսի (Առդ. 7. 17:  
 Ծ. Արն. Ժ. 31.), ինչ մշտնջենաւոր  
 մտադրութեամբ և դարձմամբ: սրտի  
 և մտաց առ նա և առ ամենայն ար-  
 դիւնաւոր գործս և չարչարանս նոր-  
 րա, որովք պատրաստեաց զփրկութի  
 մեր: Արբ կամի խօսել զինչ կի՞ գոր-  
 ծել հարցանէ ցանձն իւր. ո՞րպէս  
 արար Յիսուս 'ի սոյնպիսի արկածս.  
 ո՞րպէս խօսիցէ կամ զինչ առնիցէ  
 նա, Էթէ լինէր 'ի տեղ ի լամ Այդ-  
 պիսին ունի զհրաման և զուրախութի  
 ինդրել յանուն Յիսուսի Քրիստոսի  
 Աթէ աղօթս առնէ, ո՞չ մնայ յերկ-

բայութեան, այլ փորձէ յանձին, թէ  
 հայր տեառն մերոյ Յիսուսի Քրի-  
 զոր և նա ունի զիրաւունս նմանապէս  
 անուանել հայր իւր, և որ բաւական  
 է առ ամենեւեան, որք կարդան առ  
 նա (Յով. ի. 17: Հով. Ժ. 12.),  
 վասն Քրիստոսի անշուշտ լուիցէ  
 զաղօթս սրդւոց իւրոց՝ որք հաւա-  
 տովք խնդրեն: Աթէ կայցէք յիս,  
 և բանք իմ՝ ՚ի ձեզ կայցեն՝ զոր ինչ  
 կամիցիք, խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ  
 զոր ինչ խնդրիցէք ՚ի հօրէ յանուն  
 իմ, տայէ ձեզ խնդրեցէք և առ-  
 նուցուք, զի ուրախութիւն ձեր լցել  
 եղիցի (Յով. ԺԵ. 7: ԺԴ. 13: ԺՂ.  
 23. 24: Ղ. 9-10. ԺԹ. 9. 10): Ասան  
 որոյ եռանդն, որ է հաստատ և զօ-  
 րանայ հանապազօր յաղօթս, որ է լի  
 հաւատովք ՚ի Յիսուս քրիստոս, է  
 նոյնպէս ճշմարիտ նշան վաղահաս-  
 օգնութեան աստուծոյ: Բանզի այս  
 է համարձակութիւնն, զոր ունիմք  
 առ նա, զի զոր ինչ հայեցուք ըստ  
 կամաց (յն, այնպէս, որպէս վայել է  
 կամաց և խրատուց Յիսուսի Քրի)



լսէ մեզ (մ. Հով. Ե. 14. 15.)։ Աճ  
 արդ՝ հաւատացելոց չի պարտ հոգալ  
 ինչ, այլ յամենայնի աղօթիւք և հայ-  
 ցուածովք և գոհութեամբ զխընդ-  
 րուածս իւր յայտ առնել աստուծոյ  
 (Փիլ. Դ. 6.)։ Քանզի նոքա այնպէս  
 հաւատի են, թէ աստուած լուսիցէ  
 աղօթից նոցա, զի նախապէս կարեն  
 փառաբանել զնա վն այնր և բերկ-  
 րապատար սրտի՛ն աղաչել օրհնեալ  
 է աստուած, զի ոչ ՚ի բացէ արար  
 զաղօթս իմ և զողումուի իւր յինէն  
 (Աղ. կ. 20)։

Նոցա, որք ունին և պահպանեն  
 շայդպիսի հազորդութիւն ընդ Հի  
 Քի, նոցա միայն տուեալ է խոստումն  
 հանապազորդուի խրատատուի լու-  
 սաւորուի և առաջնորդուի հօգւոյն  
 սրբոյ, զոր առաքեաց հայր յանուն Հի  
 Քի, և զորմէ ինքն Քս ասէ (Հով.  
 Ժ Դ. 26. Ժ Դ. 13.)։ Թէ նա ուսուցէ  
 ձեզ զամենայն, և առաջնորդեօյէ  
 ձեզ ամենայն ճշմարտութեամբ և յի-  
 շեցուցէ ձեզ զամենայն, զոր ինչ ա-  
 սացի ձեզ։ Նոցա իսկ գուշակեալ է,

Թէ 'ի վերոյ նոցա հեղցէ աստուած  
 զհոգի շնորհաց և զԹուէ (Օտար.  
 Ժբ. 10.): իմ. Թէ նա առատապէս  
 պարգևեսցի նոցա զօգնութիւն հոգ-  
 ւոյն իւրոյ, որ տացէ նոցա զհաւատս  
 'ի շնորհս նորա և զարթուցէ զհոսա  
 առ աղօթս: Առքա իմանան Կմանա-  
 պէս, Թէ նոյն իսկ բարի հոգին աս-  
 տուծոյ առաջնորդեսցի նոցա յերկիր  
 ուղիղ, Թէ նա 'ի Թիկունս հասանէ  
 ակարուԹեան նոցա. նաև յորժամ ոչ  
 գիտեն, Թէ զոր կան յաղօթս, որպէս  
 արժան իցէ, ինքն հոգին բարեխօս  
 լինի վասն նոցա (Աղծ. Ճխբ. 10:  
 Կռ. 26. 27.): Բանդի նա գի-  
 տէ զամենայն ցանկութիւնս սրտից  
 նոցա, և հեծութիւն նոցա 'ի նմանէ  
 ոչ ծածկեցաւ (Աղծ. Լէ. 10.): Ը-  
 սոքիկ վսէմ ներգործութիւնք, պար-  
 գևք և նշանք զօրութեան հոգւոյն  
 սրբոյ, որոց հաւատացեալք ըստ չա-  
 փու ընդունակութեան իւրեանց Լի-  
 նին հազորդակիցք, են վասն նոցա  
 նմանապէս վկայութիւնք և առհա-  
 ւատչեաց հանդերձեալ երջանկութե



հոցա. այդպիսի շնորհօք հաստատին սիրտք հոցա 'ի հաւատս (Աբր. Ժ՛գ. 9.): Աստուած ինքն տայ հոցա այսու օրինակաւ զհաւատի նշան, իմ, զամենայուսալի վստահութիւն, թէ նորքա են որդիք հորա, և սմին իրի ժառանգք խոստացեալ հոցա յաւիտենական կեանաց (Կոր. Է. 14. 17: Թ. Առն. Թ. 21. 22: Ե. 5: Ագե. Դ. 30: Պաղ. Դ. 6. 7):

Աւ 'ի հիմնել ամրացուցանել և հաստատել զհաւատս 'ի Յիսուս Քրիստ և զզուգաւորեալ ընդ այնմ զսերտ հաղորդութիւն սրտից մերոց ընդ Նամ, սահմանեաց հա ինքն զսուրբ ընթրիս, իբրու զհաստատ յիշատակ մահուան իւրոյ, զոր կրեացն վասն հաշտեցուցանելոյ զազգ մարդկային լէ աստուծոյ: Յայնմ ունիմք մեք ըստ բանից սրբոյ աւաքելոյն պողոսի, ըզհաղորդութիւն մարմնոյ և արեան Քրիստոսի. վասն զի, երբ ընդունիմք զայն հաւատովք, 'ի ձեռն նորին ոչ միայն լինիմք ճշմարիտ մասնակիցք ամենայն փրկաւ ի թ արդէնց

նորին հաշտութեան (ցի, մամուսակիցք  
 մարմնոյ փրկչին, որ վասն մեր պա-  
 տարագ մատուցաւ, և արեան նորա,  
 որ հեղաւ վասն մեր), այլև առաջի  
 այլոց դնեմք զվկայութիւն այսր մա-  
 նակցութեան մերոյ: Ապաքէն ճաշակ-  
 մամբ սրբոյ հաղորդութե, որ պարտի  
 լինիլ հաց հոգևոր (ԶԳ. 7. 48.  
 58). միաւորին ամենայն ճշմարիտ  
 հաւատացեալք ամուր շաղկապաւ,  
 իբրու 'ի մի մարմին, ոչ միայն ընդ  
 միմեանս, այլև ընդ Քրիստոսի, որ է  
 գլուխ նոցա: Անդ նմա միաւորին  
 նոքա 'ի ձեռն այնր այնչափ ևս ճշ-  
 մարտապէս, իբր թէ նա և այսօր ե-  
 րեւիցի 'ի միջի նոցա, որպէս էրն 'ի  
 մէջ աշակերտաց իւրոց, յորժամ սահ-  
 մանեաց զայս ընթրիս 'ի յիշատակ  
 իւր (Մատ. 26—28: Թ. Արմ. Ժ.  
 16. 17: ԺԹ. 23. liā): Քանզի և  
 աստանօր հայի հաւատն յաներևոյթն  
 իբրև 'ի տեսեալ (Աք. ԺԹ. 27):  
 Այսր աղագաւ սուրբ հաղորդութիւն  
 և է վասն հաւատացելոց արդիւնա-  
 ւոր հնարք, որ օժանդակ լինի սի-



րոյ առ աստուած և առ մերձաւորս  
 Քանզի յայնմ երևի նոցա կարի ազ-  
 դեցուլթեամբ իմն սէրն, զոր ունի  
 աստուած առ մեզ, զոր եղևեցոյց այ-  
 նու, զի զորդին իւք զասն մեր ամե-  
 նեցուն մատնեաց 'ի մահ, Եւ զոր-  
 պիտի այլ ներգործութիւն կարէր  
 արդեօք ճնանիլ 'ի սիրտ երախտա-  
 գէտ ճանաչումն և զգացումն այսր  
 անպատու և անասման սիրոյ նո-  
 րա, եթէ ոչ զսուրբ և զփոխադարձ  
 սէր առ նա և առ որդիս նորա, որք  
 են եղբարք մեր (Թ. 3. 4. 10. 16.  
 16. 19.)։ Ըստ արժանոյն տօնէն ըզ-  
 սուրբ ընթրիս այնքիկ, որք են Յի-  
 սուսեանք, յայնժամ, երբ ըստ բանից  
 ուրեմն բարեպաշտ վարդապետի ե-  
 կեղեցւոյ, կատարեն զայդպիսի տօնա-  
 խմբութիւն այնու եղանակաւ զի 'ի  
 միտ առնուցուն փրկաւէտ և ուրա-  
 խարար տեսութեամբ զմահ իւրեանց  
 'ի յիշատակի ամենօրհնեալ մահուան  
 նորա. այնր մահուան ասեմ, որում  
 պարտական են նոքա այնու, զի ոչ  
 ևս ունին պատճառ երկնջիլ 'ի մահ-

ուանէ իւրեանց, այլ ընդ հակառակն  
հային յայն, իբրու 'ի միջոց, որ ձեռ-  
նատու լինի նոցա յերթալ յարքայ-  
ութիւն արդարոց, կատարեալ որդ-  
ւոց աստուծոյ, յի, յետ կրեւոյ զչար-  
չարանս մահու, գնաց նախ ինքն  
Տէրն մեր՝ պատրաստել նոցա տեղի,  
և ուր նախ 'ի յաւիտեանական օթեա-  
հըս խաղաղութեան միշտ եղիցին ի  
նմա (Հով. ԺԴ. 1—3; Թ. 171)։ Ասան որոյ ձշմարիտ հաւատա-  
ցեալն, տօնելով զընթրիս յիշատակի  
սիրոյ փրկչին իւրոյ, ընդունի նորոգ  
զպարտաւորութիւն յաւիտեանական և  
անփոփոխ հաւատարմութեան և փո-  
խադարձ սիրոյ։ Անդութեամբ և  
գոհութեամբ խոստովանի հա, թէ  
վասն ամենայն երջանկութեան իւ-  
րոյ պարտական է միայն փրկչին, և  
նորոգէ զսուրբ առաջդարութիւն իւր  
զհիմնեալն յանկեղծ զգացողութեան  
երախտագիտուէ թէ սյսուհետեւ ծա-  
ռայեցցէ նմա յաւիտեան, և պահեսցէ 'ի  
սրտի իւրում մինչև ցվերջին շունչըզ-  
յիշատակ չարչարանաց և մահուան նր։



ԳԼՈՒԽ ԺԿ:

Սփարէր ընկերցանոսն և քննութիւնս  
 ուրի մասնաւորապէս զբոց. ըստ որ-  
 ընձ հնար է՝ որ օժանդակ ընէ մեզ  
 ՚ի բարեպաշտութիւն: Ան ըն շէ՞րբ  
 արժան է ճանաչել զսփարած յարար-  
 ծոց և ՚ի զգացողութեց սեպհանի եղծի  
 Տարաց:

Այ կարեմք մեք ըստ բաւականին  
 գոհանալ զաստուծոյ վասն ամենայն  
 բարեաց, զորս եցոյց մեզ յայտնութիւն  
 կամայ իւրոց ՚ի սուրբ գիրս: Օ ի-  
 սրդ յայտնեաց դաւիթ զգոհուլիւն  
 իւր վասն այնր, զոր իմացաւ ՚ի բա-  
 նից աստուծոյ: Այլ այս էր յոյժ սա-  
 կաւ առ համեմատութեամբ այնր, զոր  
 մեք այսօր յաստուածաշունչ գիրս մեր  
 գտանեմք: Այլ կամք աստուծոյ, որ-  
 պէս ՚ի հին, նոյնպէս և ՚ի նոր կտա-  
 կարանա, միմիայն էր վասն փրկութե  
 և սրբութե մեղաւոր մարդոց, թէ-  
 պէտ կամքն այն ոչ յառաջ, բայց ՚ի  
 նորն կատարելապէս յայտնեցաւ և





գործածեալք 'ի նոցանէ 'ի բազում  
 ժամահակս երբ ուսուցանէին՝ վկայ-  
 են մեզ. ոչ [Ժէ միայն զհաստատ գի-  
 տելոյ նոցա զմիտս այսր մատենի,  
 այլ և զմեծամեծ յարգանաց առ նոյն՝  
 որ հիմնեալ էր 'ի սեպհական փոր-  
 ձառութեան նոցա:

Մտաբերեալս կայ վս մեր այլևս կըրկ-  
 նապատիկ աղբիւր աստուածգիտուն,  
 յորմէ և հեթանոսք իսկ կարեն և  
 պարտին ըմպել և եթէ անարգես-  
 ցեն զայն, լինին ամենւին առանց  
 պատասխանւոյ (Նորմ. 20): Իւ-  
 բաքանչիւր մարդ, որ ունի զբանա-  
 կանութիւն և զյօժարութի 'ի մտա-  
 ծել, գտանէ զմին յայնոցիկ աղբերաց  
 'ի բնութեան կամ յորարածս, որք  
 զնովաւ, և որք հրաւիրեն զնա և ա-  
 ռաջնորդեն նմա առ գիտութիւն և  
 առ փառաբանութիւն այնր արարչի  
 և պահապանի (Սող. ԺԲ. 2—7: Նոր-  
 մ. 20: Գործ. ԺԴ. 17: ԺԷ.  
 24): Իսկ զմիւսն գտանէ յիւրում  
 խղճի մտաց, որ ամենայն պարզութե  
 տայ նմա ըտել զձայն անեքեղծ բարձր



դատաւորի խորհրդոց հորաւ և գործոց (Նահապետ. ք. 12—16: Պարթ. ժէ. 27—31): Աւան որոյ մի եղ իցուք անզգայք, և մի համարիցուք անարգ զայսոսիկ օգտաւէտ յայտնութիւնս աստուծոյ (Նահապետ. ք. 19), որք յայտնեն զարարիչն, թէ ՚իմեղ և թէ արտաքոյ մեր յամենիմաստ ստեղծագործութիւնս: Քանզի ՚ի ձեռն այսոցիկ, որպէս վկայեն իսկ սուրբ գիրքն ձգէ և դարձուցանէ հա, զձայն իւր արտաքուստ և ներքուստ առ ամենայն մարդիկ. ՚ի ձեռն այսոցիկ արարածոց հա ոչ է հեռի յիւրաքանչիւր ումեքէ յազգի հորա, և զոչ ոք եթող, որում ոչ յայտնեսցէ զանձն իւր (Պարթ. ժէ. 27: ժէ. 17): Այլ ճշմարիտ յայտնութիւնն, որ քարոզեցաւ հաս իսրայէլացւոց և հասապետաց հոյա ՚ի ձեռն մարգարէից, և յորում մեք քրիստոնեայքս, ՚ի յետագայ ժամանակս, ամենայն կատարելութեամբ, ՚ի միասին ընդ հին յայտնութեանցն աստուծոյ, խրատեալ եմք ՚ի ձեռն որդւոյն աստուծոյ (ք.



( ) Ե՛ն զ. 6. Ա՛: Սողոմ. ճիւղ. 8. 9:  
 Հոգի. Բ. 12: զ. 2. 3: Եբր. Թ. 1.  
 Ա՛). որ և հաստատէ, մեկնէ և կա-  
 տարէ զյայտնութիւնն աներևոյթ ա-  
 րարչին, պահապանին և դատաւորին  
 որ ծանուցեալ է մեզ մարդկան արա-  
 թածովք և խղճիւ՛ մտաց: այն է որ  
 առնէ վասն մեր բնաւին դիւրիմաց  
 և կարի ազդու զայն վկայութի յայտ-  
 նութեան զանարգեալն 'ի մէնջ, և  
 զթողեալն յաճախ առանց ամենայն  
 մտադրութեան (Հոգի. Թ. 21: Կորնթ.  
 Ժ. 16.). զի առաւել դարձցի վասն  
 մեր 'ի ճշմարիտ օգուտ և 'ի մխի-  
 թարութիւն (Սողոմ. Ժ. 8—15.):

Մատեանք սուրբ գրոց հին և նոր  
 կտակարանաց, յորս է այն ճշմարիտ  
 յայտնութիւն աստուծոյ, որ է հա-  
 մաճայն ո՛չ միայն ընդ էութեան և  
 բնութեան, այլև ընդ յօժարութեյ  
 և կամաց նորա, կարեն ընծայել մեզ  
 զօգուտ ճշմարիտ յայնժամ և եթ,  
 յորժամ մեք ընթեռնումք զայնոսիկ  
 ո՛չ միայն ըստ սովորութեան, առանց  
 զգացողութեան և մտածութեան և



ցուրտ սրտիւն, այլ անձնափորձ խըղճ-  
 մտանօք, ջանիւք, սեպհակահնել շամփ  
 մեզ ինքեանց, և անկեղծ սրտաբեկ  
 աղօթիւք առ աստուած վասն օգնուե  
 նորա և լուսաւորութեան ՚ի ձեռն  
 հոգւոյն նորա. և յորժամ զընթեր-  
 ցեալն պահեմք ՚ի բարեպաշտ սրտի  
 որ ծարաւի փրկութեան այնպէս, զի  
 բերցէ սա զփրկաւէտ պտուղս (Պատմ.  
 Եւր. 18): Ար շայս օրինակ ընթեռնու  
 զայսոսիկ մատեանս, նա սակաւ առ  
 սակաւ ուսանի, զի ևս քան զևս գի-  
 տիցէ, զոր ընթեռնու (Գործ. Եւր.  
 30, և ևս քան զևս արասցէ, զոր  
 գիտացն (Ստեփ. Եւր. 24—27, 33.  
 Եւր. 22): Ատք նորա գնասցեն ըստ բա-  
 նից տեառն (Ստեփ. Եւր. 133: Գործ.  
 Եւր. 11), և հաւատարիմ փորձք ան-  
 ձին իւր տացեն նմա յաճախս, և մա-  
 նաւանդ՝ յայնպիսի տեղիս, որք վերա-  
 բերին առ ներքին և ծածուկ պիտոյս  
 և կարօտութիւնս սրտի, զառաւել  
 պարզ և բաւական օգնութիւն, քան  
 հասարակ մեկնութիւնք այլոց, թէ-  
 պէտ և զնոսին իսկ արժան է երախ-



տագիտութեամբ գործածելու եթէ  
 յայնպիսի արանց գրեալ են, որք գի-  
 տեն զճանապարհ Տն, և օրինակօք  
 իւրեանց տան ՚ի հմին գուշիղ և զան-  
 սուտ խրատս: Այլ է որ ընթեռնու  
 զաստուածաշունչ գիրս, վերամբար-  
 ձեալ զաղօթս իւր առ հոյն հոգին,  
 որ է արարիչ նորին, և արժանացել  
 օգնութեան նորա. և եթէ ընթեռ-  
 նու զայնոսիկ մտօք. զի իմաստուն լի-  
 ցի ՚ի փրկութիւն (Բ. Տեճ. 74. 15),  
 նա ընթեռնու արդարեւ զբազում ինչ  
 այլ աչօք. նաև խնդրէ և գտանէ աս-  
 մեհեհին զայլ ինչ, քան այնքիկ, որ  
 ընթեռնուն զնոսին յայլ ինչ հպա-  
 տակս: Ա՛հ արդ՝ թող եղիցին ըստ  
 բանից դաւթի գովելիք իրաւունք  
 տեառն ՚ի տեղւոջ պանդխտութեան  
 քո (Սողճ. ճԺ 54.) և մտադրուք  
 քննեալ զգիրս, զի հոքօք ունիցիս ըզ-  
 կեանս յաւիտենականս: Սակայն զայս  
 գտցես դու միայն յայնժամ, երբ եր-  
 թիցես առ հա, որոյ վասն վկայեն նո-  
 քա (Յով. Ե. 39. 40.) առ հա, որ է  
 պաաճառ կենաց և լոյս կենաց (Յով.

ամ. 4.)։ Աթէ դաւ զայդ օրինակ քրն-  
 նեսցես զսուրբ գիրս, փութով հա-  
 լաստի եղիցիս 'ի ճշմարտութե գե-  
 րապանժ և օրհնաբան արդեանց ան-  
 դադար պարապման 'ի բանա աստու-  
 ծոյ, որպէս վկայես սուրբ գիրք։  
 Յայնժամ յաջողեսցիս և ուղղեսցես  
 զճանապարհս քո. և ապա խելամուտ  
 լինիցիս (Յե.՝ Աստուծոյ. ամ. 7—9։  
 Սող.՝ ճժ. 2. 3։ ճժ. 8. նն. ամ. Պէ. ք.  
 2.)։ Յայնժամ ուսցիս դու մեծաւ  
 վստահութեամբ սեպհականել անձին  
 քում զխոստմունս գրոյ. և 'ի նոսին  
 նախագրեալ բազում օրինակք սխրա-  
 լի համբերութեան և փորձեալ աստ-  
 ոածային մխիթարութեան կենդա-  
 նացուցեն զսիրտ քո բերկրալի յու-  
 սով (Նո.՝ ճԷ. 4.)։ Աստուած 'ի  
 ձեռն բանի իւրոյ կամի ուղղել ըզ-  
 քեզ առ ճանապարհ հաւատոյ. ամ-  
 քացուցանել զքեզ 'ի հաւատս և պահ-  
 պանել և վերջապէս երջանկօրէն  
 կատարել զքոյդ փլկութիւն։ Օր  
 ինչ նա բառբառեաց 'ի բերան, և  
 որ ինչ նախագրեալ է 'ի նմանէ. ամ



կատարիս Վարնզի որ ինչ միանգամայն ելանէ 'ի շրթանց աստուծոյ՝ է շօրութի և ներգործուի. . . . ասէ և առնէ (Աղէի. ԼԷ. 14: Առդ. ԼԷ. 4:). և ամենայն խոստմունք աստուծոյ էն վասն հաւատացելոց 'ի Վրիստոս եթէ 'ի նմա և եթէ վասն նորայ, այն և ամէ'սն 'ի փառս ւոյ (Է. Արշն. ւն. 20:):

### ԳՎ ԱԽԻՍ. ԺԲ:

( ) Գասաւէր հիշատակեան աւերացանէն վարդապետութեանց և արուստի և բովանդակ էկէ շէյման. պաշտօնապարտէ: Եւրոպոսն առ ընդհանրէն աղօթու: Անհանցուն ընդ այլոց բարեպաշտ ճարտոյ և համահարգ ընդ նոսիս պարապորտութեան ցաւառած պաշտուէ: Արգելոցուն շրիստեանէն էրգոյ և խոհեմով գործածուն վարդապետան և խրատան գրեանց, որդի մեալ էն 'ի սուրբ գերոս:

Վ յառաջադիմութիւն ճշմարտ աստուածպաշտութեան և բարեպաշ-

տու թեան՝ օգտէ մեզ նմանապէս մը-  
տադիւր և յօժարակամ ունկնդրու թի  
և կիրառու թի աւետարանական քա-  
րողաց և վարդապետու թեանց, որք  
հիմնեալք են՝ ի սուրբ գիրս. սրպէս  
և առ հասարակ եռանդագին և առ-  
կեղծ մասնակցու թիւն, զոր ունիմք  
յամենայն եկեղեցական պաշտօնա-  
տարու թեան աստուծոյ, ոչ երբէք  
մնասցէ առանց օրհնալից օգտի  
Քանզի երանի այնոցիկ է, որք լեն  
զբանն աստուծոյ և առննն: (Ղ. 1.  
Ժ. 28): Ղաւի թ է յայնմ մեզ օրի-  
նակ (Ս. ղ. 4. ձ. 11. ն. 1). նաև ին-  
քըն իսկ փրկիչն մեր, որ այց ելանէր  
այնչափ յաճախ և յօժարու թեամք  
տաճարին աստուծոյ և վարդապետա-  
կան ժողովոց ՚ի ժողովրդարանս հրէ-  
ից, զարթուցանէր օրինակաւ իւրով  
զժամանակակիցս իւր առ նոյնպիսի  
ջերմեռանդու թիւն: Վ նմանէ իսկ  
՚ի հիմնողէ և ՚ի տեառնէ եկեղեց-  
ւոյ իւրոյ սահմանադրեալ է պաշտօն  
եկեղեցական վարդապետաց Քրիս-  
տոսնէից, իբրու կարգադրու թիւն ինչ



հասխապատրաստեալ վամն քարոզելոյ  
 և պահելոյ զաւետարան նորա յամե-  
 հայն ժամանակս: Ամն այսր պատ-  
 ճառի իսկ կարգադրու[թիւս այս պար-  
 տի Լինել ծանրագին և սխրալի վս  
 ամենայն հետեողաց Քն, որք պար-  
 տին գործածել զայն ամենայն զգու-  
 շու[թեամբ խղճի մտաց վամն սեպ-  
 հական փրկու[թեան իւրեանց: Աջ  
 որք ունի իրաւունս համարիլ զայն ա-  
 նարգ, կամ ինքնակամ, որպիսի և ի-  
 ցէ պատճառաւ մեկնիլ յայնոցիկ քրիս-  
 տոնէական ժողովոց (ԱՊՊԻ Եր. 18.  
 20: ԱճԵՊՊՅ. 7. 11. ԱԻ: ԱԵՐՊՅԵԵ.  
 Ժ. 25.):

Վ վերայ այսր ամենայնի ՚ի յառա-  
 ջադիմու[թիւնն ՚ի բարեպաշտու[թեան  
 շահաւէտ է նմանապէս հաղորդու[թիւ  
 և պարզամիտ և աշդադար յաստուած  
 նկատեալ կենցաղալարու[թիւնն ընդ  
 այլ որդւոց աստուծոյ, [թէ և նոքա  
 դասեալ իցենն ՚ի [թիւն եկեղեցական  
 վարդապետաց, կամ իցենն յայլ ինչ  
 կոչմանս որպէս և եղբայրական ընդ  
 նոցա միու[թեանն ՚ի հաւատս, ՚ի սէր:

յաղօթս և յօրհնալից խոկմունս ըզ-  
 բանէն մյ, նման այնմ, ուր զամենեմբ  
 զայս ամ յառաջին վկայս քրիստոնէա-  
 կան եկեղեցւոյ յերուսաղէմ (Պ. Ե. Ժ. Ի.  
 44. 47: Ի. 32), և յայլ առաքելական  
 եկեղեցիս (Խ. Ե. Ժ. Ի. 3. ԼԻԱ 15. 16:  
 Ի. Պ. Ե. Ժ. 2—5: Լ. Բ. Ժ. 25.), Իւ-  
 րաքան չիւր հաւատացել ուր և ընկա-  
 լաւ շնորհս ինչ՝ (պարտի) ՚ի միմեանս  
 զնոյն մատակարարելի թէպէտե բա-  
 ժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է,  
 որ զայս ամենայն յաջողէ և բաժա-  
 րէ իւրաքանչիւր որպէս և կամի Եւ  
 վասն այսորիկ շնորհք նոյն հոգւոյ,  
 որք տուան իւրաքանչիւր ումեք ՚ի  
 բաժին պարտին լինել միշտ պատ-  
 բաստ յօգուտ եղբարց նորա (Ի. Պ. Ե. Ժ.  
 Ի. 10: Լ. Ե. Ժ. ԼԻԱ Ի. Լ. Ե. Ժ. Ի.  
 4. 7. 11. 27: Ի. Տ. Ժ. Ի. 6: Լ. Ե. Ժ.  
 Ժ. 4. ԼԻԱ): Խոստովան լերութ միմե-  
 անց զմեզս և աղօթս արարէք ՚ի վր մի-  
 մեանց (Լ. Ե. Ժ. 16): Փլկիչն մեր  
 ասէ (Պ. Ե. Ժ. Ի. 49). հուր եկի  
 արկանել յերկիր, անուամբդ՝ հուր  
 իմանայ նա, հուր անկեղծ սիրոյ առ



հա և հանազազորդեան կենդանի և  
 նախանձայրյղ ջերմեռանդութեան առ  
 գործս նորա Մ.ՅԼ քանի՛ դիւրաւ  
 չքոսի ՚ի բաղումն եռանդն այն քա-  
 նի՞ փութով զարթոցեալքն թողուն  
 զառաջին սէր, և լինին վաստակեալք  
 և ա՛նհոգք, կամ մուրրին վերափն  
 ամենեկն յաշխարհային զբաղմունքս և  
 գործս, և յերաւի, ո՛չ համբերեն մին-  
 չե ցլերջն (Մատ. Եղ. 12. 13, Հայր.  
 ք. 4, ք. 15, 16, Վաղ. Ե. 7, ք.  
 Պէր. ք. 20), Սակայն ՚ի ձեռն հա-  
 զորդութեան ընդ սրբոց, որ հիմնե-  
 ւ ՚ի միաբանութեան հոգւոյն (Սէբե-  
 ք. 3, Վարժ. ք. 32). պահեայն հաւր  
 և երբ կամի շիջանիւ միշտ նորոգ  
 վառի, որպէս զվառեալ ածուխս, զորս  
 ո՛չ ցրուեն, այլ պահեն ՚ի միասին,  
 զի մի կարիցեն փութով շիջանիւ  
 Ար զգայ զանձն կենդանացեալ ճշմա-  
 րեա հոգւով հաւատոց ՚ի Հիսուս  
 Քրիստոս, նա նմանապէս քանիւ և  
 գործով ո՛չ միայն ՚ի հրապարակս,  
 այլև ՚ի տան իւրում, ա՛ներկիւղ և  
 Լիովին վստահութեամբ խոստովա-

Կի առաջի աշխարհի զխաչեյեալն և  
 զյարուցելն (Մատթ. Ժ. 52: 40. Մարտ. Ժ. 40. 40). Հաւատալով ՚ի Հիսուս, վստ  
 այսր իսկ խօսեսցի և վկայեսցե՛ք զՀիսուս,  
 [Ժէ և ընկալցի վասն այնր զանար-  
 գանս և զհալածանս (Ք. Ստեփ. Գ. 13: Ստեփ. Ե. 41:)] Եւ ՚ի հոյն իսկ  
 Ժամու պարտի նաև յօժարու [Ժեամբ  
 սրտի կենցաղաւարուք և ամբարտա-  
 բին գործովք լը ընտանեաց իւրոց  
 ըստ հոգւոյ և ընդ ամենայն այլոց  
 ապացուցանել, [Ժէ ուրի զհոգի հե-  
 զու [Ժեան Հիսուսի Քրիստոսի, յի-  
 շելով զառաքելական խրատս. խոնար-  
 հու [Ժեամբ զմիմեանս լաւ համարել  
 առաւել քան զանձինս (Փիլ. Գ. 3: 6: 40. Ստեփ. Գ. 2. 4.)] Քանզի ա-  
 ռանոց խոնարհու [Ժեան, ոչ որ եղիցի  
 մեծ յարքայու [Ժեան երկնից. և որ  
 ոչ եղիցի իբրև զմահկտի, ոչ ծանօ-  
 ցե՛ք զտկարու [Ժիւն իւր, ոչ պատրաստ  
 եղիցի առ ընդունել զխրատս, ոչ հե-  
 սի յամբարհաւաճու [Ժէ և հեղ իբրև  
 զմահուկ, Կա ոչ մտանիցէ յարքայու  
 երկնից (Մատթ. Ժ. 1. 13):]



Արանեալ է տանուտէրն, որ ընդ  
 որդւոյ և այլ ընտանեայ իւրոց զը-  
 տանի յայնպիսի երանելի միաբանու-  
 թեան սրտից. զիկարէ համարիլ ըզ-  
 նոսա հաւատարիմ ուղեկիցս իւր 'ի  
 ճանապարհի առ ընդհանրական օթե-  
 վանս յերկիրս, և ասել. ես և տուն  
 իմ պաշտեմք շՏէր (Յէ.՝ Ա.՝ Եդ.՝  
 141). ես սնուցանեմ զորդիս և շըն-  
 տօժիւնս իմ խրատու և ուսմամբ Տ՛ն  
 (Ա.՝ Ե.՝ Գ.՝ 4). և պատուիրեմ որդ-  
 ւոց իմոյ և տան իմոյ՝ պահել զճա-  
 նապարհ տեառն և առնել զարդա-  
 բութիւն և զիրաւունս (Ս.՝ Ե.՝ Ժ.՝  
 19: Թ.՝ Բ.՝ ( ) Ե.՝ Գ.՝ 6—9): Ա՛՛՛՛ Ե-  
 րանի է տանն, որ ունի շայնպիսի  
 հայր ընտանեայ, որ դարձուցանէ առ-  
 այն զհոգացողութիւն իւր և կատարէ  
 հանապազօր: Ասե բանք, որք ետուն  
 մեզ զառ իթ վասն այսր մտածուէ և  
 ճառի, յիշեն մեզ զայս պարտաւորու-  
 թիւն. Ի՞նչ է ,, հաւատայ 'ի տէր Յ՛ս  
 Քրիստոս, և փրկեսցիս դու և տուն  
 քո ամենայն ,, Ի՞նչ, եթէ և այս վեր-  
 ջիւնս դարձցի առ Քրիստոս և հա-

ւատասցէ 'ի նաւ (ԹԻՄ. Ղաւթ. Ժ. 2.  
 24. 44: ԺՊ. 14. 15: Ղաւթ. ԺԺ.  
 9: Յու. Դ. 55): Սեծ և փորձիք  
 ամենայն դարուց հաստատեալ է այն  
 խոստումն ՅԵՒ (Սաղմ. ԺԸ. 20) շի  
 ուր իցեն երկու կամ երեք ժողովել  
 յանուն իմ, ահա եմ ես 'ի մէջ նոցա  
 Սակ եթէ բազում է թիւ այն ցիկ,  
 որք առ այս վախճան միաբանին ա-  
 ռաջի նորա, գիտեմք մեք, թէ նա  
 առ հոսա ամենեսեան նմանապէս է  
 մերձ. և թէ իւրաքանչիւր 'ի նոցա-  
 նէ ունի զմասն իւր 'ի նորին օրհ-  
 նութեան:

Սան շարթուցանելոյ և խրախու-  
 սելոյ առ բարիս օժանդակէ նմանա-  
 պէս երկիւղած երգեցողութի հոգե-  
 ւորական երգոց, որպէս և քնթեր-  
 ցումն և քննութի օգտաւետ վարդապե-  
 տական և շխտողական մատենաց հին  
 և նոր ժամանակաց: \*)

\*) Մշտնադիտք և աշտնա զօրուորք Բա-  
 րեպաշա արանց էն յոյժ օգտակորք,  
 ԵԷՐՈՒ Կնարք, առաջնորդք և



Օ ի բանն Վարխատոսի բնակեացի  
'ի ձեզ առատապէս ամենայն իմաս-  
տութեամբ, ուսուցանել և խրատել

չարեւոյանողտ առ սորէ աղօթու  
Յայն միտն ինչ զիտնն մեր ըստ խաչա-  
րանաց աշակերտաց իւրոց, սորոյց նո-  
ցա աղօթել (Պատմ. Ժմ. 1. lix):  
Սին 'ի ջերմեանք աղօթանէր թիւ-  
րանէից առ. Եւ մայն 'ի ճամէնից  
ու ճարեն քոս սանանիւ Բարառ աղօ-  
թել: Պատմ. ճարեն ընկեանաւ զայն  
նորից առ 'ի թաղել զիւրաւոս, Եւ որ-  
պէս և որոյ զանն արժան է աղօթել  
և առ 'ի զանել զանցն առ աղօթն  
այլ աղօթ պարտին ալապօրէն Ելանել  
'ի սրահ, սանայ մեհայն գեղապա-  
ճոյճ և զնեմառճ Բառից, և թեզ  
Բնական պարտէ յօրինել զԲառոս որ  
յայտնեն զգացողութեան, որով Բար-  
Բոտի սիրտ: Վանալ է գործողութեամբ  
ինչ պարտի սիրտն սանանիւ: Սոյն  
պարտի ինչն լաւապէս թան զանեանցն  
գիտել զպալատանն և զհրօտանն  
Եւ և հեղաւ զայնստից յաղօթն ա-

զմիմեանս սաղմնաիւք և օրհնութիւնք,  
 և երգօք հոգևորօք՝ և շնորհօք օրհ-  
 նել 'ի սիրտս ձեր զաստուած (Առդ.  
 7. 16: Թեո. Արք. Ե. 19: Թ. Առդ.  
 Ժ. 15. 26:):

Սակայն սք աստուածաշունց գիրքն  
 իսկ գերազանց երն քան զայլ ամենայն  
 մարդկայլն շարագրութիւնս, թէ և  
 լինէին սոքին կարի հաստատք, իմաս-  
 տալիցք և վարդապետականք: Սին  
 'ի հմուտ վարդապետաց Քրիստոնէ-  
 ից՝ ասէ. « ամենայն հոգևոր շարա-  
 գրութիւնք երն առութ և եթ. իսկ  
 աստուածաշունչն է աղբիւր, յորմէ  
 իւրաքանչիւր ոք կարէ ինքնին հա-  
 նել և ըմպել միայն թէ պարտէ

չափօրէն և ասանց կեղծադրութիւն  
 աստի աստի. զոր օրէնսն որ-  
 քիտ աշակէն զնեւելէ ծնօղն իւրէնց  
 (Յո. անտեանի 'ի սոբէ գեր. հե-  
 շակ զնեւս աստի Թ) (Առդ Կրք.  
 9.). Վասն որոյ հանաւանք աղճատ  
 Թութ ասն մէջ զգերաչանց աստի-  
 նորդութիւն:



ճանաչել զայն օգտիւ այնու և ոչ  
կարուսանել զախորժակ և զհանձա-  
րութիւն յայնմ: Ար այդպիսի օրինա-  
կաւ ընդէլանայ ընդ սուրբ գրոց  
նա գտցէ ամենուրեք ՚ի նոսին զայն  
որ ինչ հարկաւոր է նմա: «

### ԳՒ ԱԻԽ ԺԺԿ

( ) Ընդ նաւելոց էր առ թիւնն այսր առաջ-  
նորդութիւնն առ Բարեպաշտ էլեան,  
էմմ առ ուղիչ հեղեօղութիւնն (Յ՛՛  
Վ՛՛ն ճանաղարհաւ ուրացութիւնն մեջին  
աղագրութիւնն հոգւոյ և յաղթութիւնն աշ-  
խարհի:

Մենայնս, որ զետեղէւ է յայս գիր  
պարտի ածել զմեզ առ գիտութիւն թէ  
առաջի Յիսուսի Վրիտասի յարգեա-  
ցի և ունիցի զկատարեալ արժողութի  
միմիայն ճշմարտութիւնն (Ա՛՛է՛՛ Դ՛՛  
21.), կամ հոգի անկեղծ արդարութե  
և աստուածպաշտութեան, որ զլիս-  
վին դարձեալ է առ նա և թէ առ  
այն հասանել մնրթ է միայն առաջ-

նորդու թիւ հոգւոյն, աստուծոյ, յուղիղ  
 և ՚ի դիւրին ճանապարհի կենդանի հա-  
 լատոց որ ներդործէ սիրով առ նա  
 և առ մերձաւորս, որոյ վախճանն է  
 փրկու թիւն հոգւոց (մ. Պէ. ւ. ւ. 8:  
 9): Լորդարե Քրիստոս ունի ՚ի մէջ  
 քրիստոսէից զբազում պաշտողս, որք  
 շրթամբք խոստովանին զնա. այլ  
 սակաւ են հաւատարիմ հետեողք,  
 որք որպէս նա ինքն, ՚ի դործ ածցեն  
 զամենայն կարօղու թիւն իւրեանց լի  
 կամաց հօր և ՚ի փառս նորա: Եթէ  
 դու ջերմեռանդու թեամբ ցահկաս  
 հետեիլ նմա, պարտիս սիրել զնա ա-  
 ռտել քան զամենայն զմմն բաց ՚ի  
 նմանէ քնաս համարիլ (Փէ. 7.  
 8.), ուրոնալ զանձն և առնուլ զխաջ  
 նորա: Լուանց ատելոյ և ուրանալոյ  
 զանձն, ոչ որ կարէ լինել աշակերտ  
 նորա, թէ և կրեսցէ յանձին զայս ա-  
 նուն, սակայն չէ նմա արժանի  
 (Պ. 1. թ. 23: Ժ. 7: Ս. 38:  
 Ժ. 21. 22: ևն): Բանդի եթէ որք  
 զհոգի Բի ոչ ունի, սա չէ նք (Չ. 1.  
 9: ւ. 3. 24):



Մնձնատեւում թիւնն, որ պահանջի  
 ոչ միայն 'ի կատարեալ Քրիստոնե-  
 ից, այլ նաև յայնմանէ, որ այն ինչ  
 սկսանի հետևել Քրիստոսի, (Պ. 2-ի.  
 Ժ. 26: [Ժ. 23. 57. 62) ... է կըր-  
 կինս Քանդի այն վերաբերի մասամբ  
 առ իսկական մեղս, և մասամբ ինչ  
 առ այն, որ ըստ ինքեան չէ մեղան-  
 չական, այլ հայի առ սարգևս և առ  
 արարածս աստուծոյ: Առաջին մեր-  
 ժումն ոչ այլ ինչ է, բայց ատեւել  
 և զղուումն առ մեղս, որք երևին 'ի  
 գործս մեր և 'ի յօժարակամ թողման  
 այնր, կամ 'ի խաչ հանելն և 'ի մե-  
 ուուցանելն, զցանկութիւնս մեղայ մե-  
 րոյ (Տի. 12: Վաղ. Ե. 24: Հը-  
 առ. 2. 6: Ը. 13): Իսկ միւսն յայտ-  
 նի 'ի ճշմարիտ կատարման անշարժ  
 առաջադարումեան գարշիլ հրաժա-  
 րիլ կամառ և բարեհաճութեամբ յա-  
 մենայնէ, նաև յայնմանէ, որ է վասն  
 մեր վսեմագոյն, ամենասիրելի և յոյժ  
 ծանրագին, ոչ վասն այլ ինչ պատ-  
 ճառի, այլ ըստ հաւաստի իմացողու-  
 թեան, [Ժէ փրկիչն պահանջէ զայս

(Պատմ. ԺԴ. 55: Ստեփ. ԺԺ. 27. 29): Քահանայի պատժ է քեզ ունիլ զոգի, որ առաւել յօժարակամ է զլիլ յայնմ ամենայնէ, որ ինչ մեծ է վասն քո և ծանրագին սրտի քում, քան թէ ցանկանալ առնել ինչ կամ թոյլ տալ իմիք, որ ընդդէմ է նմա, կամ արքայութեան որա ջնասակար լակ կըլլ թուլութիւն մարմնոյ և ինքնակամ ածպաշտու թիւն է հօւր օտար 'ի վերայ սեղանոյ տեառն, որ է և ամենեին որոշ 'ի ճշմարիտ ուրացութեանն անձին, որ է հաճոյ նմա: (Թ. ՏԷԾ. Դ. 8: Առդու. Բ. 20—23): Սասն որոյ և ոչ կամի նա, զի դու անձնիշխան ընտրութեամբ թողցես զաշխարհական վիճակ քո և զկոչումն, եթէ այն չի մեղանջական (Թ. Առդու. Բ. 17. 20—24): այլ կամք նորա են, զի դու մի պըզծեսցես զանձն, այլ անարատ պահեսցես յաշխարհէ, ուրեմն մի կերպարանեսցիս կերպարանօք աշխարհիս այսորիկ ունայնութեան, 'ի հպարտութեան, 'ի վայելչութեան և 'ի շուայլութեան, այլ սրտի՛ւ և հոգւով քով



եւ լցես յաշխարհէ և ահմասն եղիցիս  
 'ի մեղաց նորին: (Թ. Արճ. 7. 17:  
 Հոռվ. ԺԹ. 2: Յով. Թ. 27: Թ. Յով.  
 Թ. 15. Թ. Յոյս. ԺԸ. 4): Այլք  
 կեամք ոչ միայն վասն վաղանցիկ ժա-  
 մանակիս այսորիկ: Առաջին և գլխա-  
 ւորն է երկնային կոչումն մեր. իսկ  
 երկնայինն երկրայինն է այնմ. և  
 առաջինն դնէ վերջնոյն զսահման և  
 զնպատակ: Յերկրի եմք մեք միայն  
 օտարք և պահուստք, ցանկացեալք  
 երկնաւոր հայրենեաց, և պարտէ մեզ  
 պատրաստել զանձինս մեր վասն յաւի-  
 տենակութեան. ոչ ունիմք զբա-  
 ղաք, որ աստէն մնալոց իցէ, այլ ըզ-  
 հանդերձեալն խնդրեմք (Աբր. ԺԹ:  
 13—16: ԺԹ. 14): Ար աստ խորհր-  
 դոյն աստուծոյ խրատի, նա 'ի վախ-  
 ճանի ընկալցի փառօք (Առդ. հԹ.  
 24): Այր աշխարհի և այնր Թմի  
 որ յաշխարհի է, չէ համեմատ ընդ  
 սիրոյն աստուծոյ և այնր ամենայնի,  
 որ յաստուծոյ է: Ար կամի բարեկամ  
 լինել աշխարհի, լինի թշնամի Թմ  
 (Առդ. 7. 24: Թ. Յով. Թ. 15. 16:

3<sup>ր</sup> 4<sup>ր</sup> 4<sup>ր</sup>): Ար վայելէ զաշխարհս  
 և զբարիս աշխարհի. որպէս թէ ոչ  
 վայելիցէ: Քանզի աշխարհս անցա-  
 նէ և ցանկու թիւնք նորա: Ապաքէն  
 մի մածուցանէր զսիրտ քո յինչ և իցէ  
 աշխարհական իրս, որչափ և բարի և  
 անմեղ երևիցեն քեզ (տ. Արհ. Է.  
 29. 30): Իսկ որ առնէ զկամս աս-  
 տուծոյ՝ մնայ յաւիտեան (տ. Արհ. Է.  
 31. տ. 3<sup>ր</sup> 17): Ամն ՚ի հին  
 եկեղեցական վարդապետաց՝ գրէ.  
 չարք կամին ծառայել աստուծոյ՝ առ  
 ՚ի վայելել զաշխարհս. իսկ բարիք  
 ծառայեն աշխարհի՝ առ ՚ի վայելել  
 յաստուած: 3<sup>ր</sup> 17<sup>ր</sup> որպէս և յամե-  
 նայնի, որք շահաւէտ է ՚ի բարե-  
 պաշտ և աստուածահոռոյ կեանս, ե-  
 թող մեզ Յիսուս Քս շօրհրակ մեծ՝  
 երթալ զհետ հետնոց նորա. (տ. Արհ.  
 21):

Պարզութիւն սրտի որ ՚ի սուրբ  
 գիրս ՚ի վեր քան զամենայն գովի և  
 փառաբանի, երևի յայնմ, զի ոչ զբա-  
 ղի, ոչ փոփոխի և անմաքուր մտա-  
 ծութեամբք ոչ խառնէ ՚ի մի և ՚ի նոյն



Ժամու զերկնայիսն ընդ երկրայսոյ,  
 (Մատթ. 7 24: Թ. Թ. 21),  
 այլ եռանդեամբ դիմէ և եթ առ մի-  
 այնն վասն պիտոյից, և ունի զմիմիայն  
 հոգացողութիւն՝ հաճոյ Լինել աս-  
 տուծոյ և առնել զկամսն նորա արդա-  
 րութեամբ: Ապաքէն ջանասցո՛ք մը-  
 տանել Լ ընդ դուռն ներզ Քանզի ան-  
 ձուկ է դուռն և ներդ ձանապարհն,  
 որ սահի ՚ի կեանս (յն, ձանապարհ  
 ապաշխարութեան, ահնանատելութե  
 և յաղթելոյ աշխարհի, որում հասա-  
 նեմք հաւատովք (Թ. 3: 5: Ե.  
 4. 5): և սակաւք են՝ որք գտանեն  
 զնա (Ղ. 23. 24): Սի ար-  
 գելցեն զմերզ թեթեամտութիւն և  
 ահհաստատութիւն՝ կատարել զսկս-  
 ելն ՚ի մերզ աստուծով զգործ հաւատոց  
 (Փիլ. Թ. 6: Ղ. 62: Եբ. Ժ.  
 38): Եւ արդ՝ պարտէ մեր մոռանալ  
 զառ ՚ի յետոյսն (ուրեմն մի հայել ՚ի  
 սեպհակահն արժանաւորութիւն մեր,  
 եթէ որպիսի և իցէ առաքինութիւն  
 յընթացս անցեալ Ժամանակաց կե-  
 նաց մերոց, մեօք կամ ՚ի ձեռն մեր

դործեցաւ). Իսկ ը հակառակն փութալ եռանդեամբ, այլ և հեղութի առ պատիւն, որոց մեք տակաւին չեմք ժամանեալ և որք սպասեն մեզ ՚ի վախճանի երկրաւոր պանդխտութե մերոյ:

Կաշաղութիւն և ողորմութիւն եղիցի ընդ ամենեւեան, որք երթան ըստ կանոնացս ըստ այսոցիկ: Միայն նոքա գտցեն զխաղաղութիւն հոգւոց իւրեանց, որ ոչ գտանի յայլ ճանապարհի, արտաքոյ Քրիստոսի և արտաքոյ հաղորդութեան ընդ ՚մա, և ընկալցեն ՚ի ՚մանէ, եթէ հաւատարիմ եղիցին մինչև ՚ի մահ, զպսակըն կենաց, զոր խոստացաւ աստուած սիրելեաց իւրոց (Յայ. ք. 10. 7. 11: Յ. 12): Օ ամենայն երկրաւոր պանդխտութիւն մեր, մինչև ցկատարած, պարտէ անցուցանել հաւատովք և համբերութեամբ: Ըստ յերկրի յաժիւն զմեօք չարչարանք և փորձութիւնք. աստ և արժան է յայտնել և ապացուցանել զհամբերութիւն և զհաւատս սրբոյ (Յայ. Ժ. 40:



Աբր. Ժ. 35. 36:) Համբերութիւն է պտուղ հաւատոց. իսկ հաւատքն գործէ զհամբերութիւն Սակայն համբերութի մնասցէ մինչև ցլախճան յայնոսիկ, որք պահեն զպատուիրանս աստուծոյ և զհաւատս Քի (Յուդ. 3. 4: Յայտ. ԺԴ. 12): Փառք աստուծոյ, որ առնէ զմեզ միշտ յաղթօղջ ՚ի Քրիստոս Յիսուս Ար յաղթէ Ժառանգեսցէ զամենայնս: Ա՛հ եթէ մարտիկ որ իցէ՝ ո՛չ պսակի՝ եթէ ո՛չ ըստ օրինակին մարտիցի (Թ. Կրճ. Թ. 14: Յայտ. Իա. 7: Թ. ՏԵԺ. Թ. 5):

Ըստուած ամենայն շնորհաց, որ հրաւիրեաց զմեզ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ յաւիտենական արքայուի փառաց իւրոց, ինքն հախապատրաստեսցէ, ամրացուցէ, հաստատեսցէ և հիմնեսցէ զիւրաքանչիւր որ որ կաթողինս ցանկայ այնմ, և ինդրէ շօգնութիւն հոգւոյ տեառն: Բանդինա ինքն կամի զկորուսեալս ինդրել. զմորրեալս դարձուցանել. զբեկեալս պատել. զվատեալս զօրացուցանել. զհզօրս պահել. և արածել զնոսա ամե-

նեսեան իրաւամբք (Նստ. ԼԳ. 16  
տ. ՏԻՏ. Գ. 4.): Նմա փնոք և գո-  
հութիւն յաւիտեանս: Ամէն



ՍՏՈՒԳՎ.Ս.Ծ Է 1971

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆԻ  
ՍՏՈՒԳՎ.Ս.Ծ Է 1971  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆԻ



Շ ուշի բերդումն անտարանական  
 ժողովքի տան մէջն էս հետեօջ  
 գրեանքս էլ ծախվումն:

1. Նոր համարանն պակաս է Վենետիկ:
2. Նախաօրոնն, +երաննոնն:
3. Նախաօր Բազիլոս. 'ե գրաբարէ  
 յաշխարհաբար:
4. Ընկերացումք 'ե հին համարանէ:
5. Նախաօրն ապառաժային Վայոս-  
 Թեանց. գրաբար և աշխարհաբար:
6. Պարսնաթիւնն ուրիշ գրոց գրաբար:
7. Տեպրակն այբոգրանն:
8. Առաջին հաննն ապառաժ:
9. Արեւ խոսակցանէր մին +ահանայի մին  
 աշխարհակնն Տարագց հեպն. աշխարհ-  
 արաբար:
10. Աւերականն զօրոնն հաս մին աբաբ  
 ծառայի պարսնաթիւն. աշխարհաբար:
11. Նախաօր Բենոնն +ընդանէակն  
 հաւապոց և Տակաբանէանն էրօնն. աշ-  
 արաբար:
12. Շ ապ հարկաւոր հարցնանիւր. աշ-  
 արաբար:





